№ 3 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 5

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆՎԱՐԻ 5 № 3

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Յունվարի 1-ից մինչև 1 յունիսի 4 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով։ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԻՐԱԿԼԻԻ ԲԱՂԱՆԻՔԸ
այսօր առաւօտեան ժամը 6-ից բացվում է բոլոր յարմարութիւններով։ 1—3

ԵՐԵՄԻԱ ԳԷՈՐԳԵԱՆ
ԳՈՒԼԱՋԵԱՆՑԻ
առևտրական խանութը դեկտեմբերի 1-ից 1905 թւի ՓՈԽԱԴՐՎԱԾ է Ա. Մանթաշեանցի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազախանային կից։ 1—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքնավարական հարցեր. Սոսկալի հակասութիւն. Վերջին տեղեկութիւններ. Մի բաց նամակ. Տեղեկութիւններ գաւառից. Զեմստվօների և քաղաքների ներկայացուցիչների ժողովը. Մամուլի գործադուլի հարցը. Մի կարևոր բացատրութիւն. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արամի պսակը. Յեղափոխութիւնը Մոսկվայում.

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

I

Ռուսաստանում ապրող ազգութիւնները անցեալ տարվայ ընթացքում առիթներ ունեցան մի քանի անգամ իրանց ազգային ձգտումների մասին որոշ կարծիքներ յայտնելու։

Նոյնը արին և հայերը,

Սակայն այն ժամանակ, երբ ֆինլանդացիները, լեհերը, մօլօրօսսիական խմբերը և նոյն իսկ մեր հարևան վրացիները հանդէս էին բերում ազգային ինքնավարութեան հարց, մենք ռուսահայերս այդ չէինք անում։ Մենք Անդրկովկասի և մեր ազգութեան համար ծրագրած բարեփոխութիւնների մէջ չէինք մտցնում Հայաստանի կամ հայկական ինքնավարութեան հարց։

Ինչո՞ւ, մի՞թէ հայկական ինքնավարութիւնը մի գրաւիչ գաղափար չէ և չէ կարելի նրան առաջ մղել հայերի կողմից իբրև ներկայ քաղաքական շարժումների մէջ հայկական գործողների պլատֆօրմ։

Հայերը հայկական ինքնավարութեան փոխարէն հանդէս բերեցին Անդրկովկասեան ինքնավարութեան խնդիր և այդպէս ձևակերպեցին իրանց ցանկութիւնը հայկական հանրագրի մէջ, որ յետոյ տրվեց Կովկասեան Փոխարքային։

II

Հասարակութեան մի մասի և մանաւանդ մեր հարևանների և առ հասարակ օտարների մէջ տարածված է մի կարծիք, որ եթէ հայերը ասպարէզ չեն հանում և առաջ չեն մղում Անդրկովկասում հայկական ինքնավարութեան հարց, դրա միակ պատճառն այն է, որ հայերը չունեն զուտ հայաբնակ ընդարձակ շրջաններ, որոնցից կարելի լինէր կազմել հայկական ուրոյն աշխարհ։ Եւ եթէ օրինակ Երևանեան և նրա կից երկու նահանգները լինէին զուտ հայաբնակ, այն ժամանակ Հայաստանի կամ հայկական ինքնավարութեան հարցը դարձած կը լինէր օրինական և հերթական հարց,

Այդ առարկութիւնը հիմնաւոր չէ։ Եւ ահա ինչու։

Ճիշտ է զուտ հայաբնակ շրջանների տարածութիւնը չէ բռնում վերև յիշած նահանգները, բայց եթէ մենք ցանկանալու լինէինք մի ամբողջութեան մէջ մտցնել այն բոլոր տեղերը, որոնք զուտ հայաբնակ են և կամ ունեն հայ ազգաբնակչութեան մեծամասնութիւն, մենք կը տեսնէինք, որ մենք հայերս էլ կարող կը լինենք գծագրել մի շատ պատկառելի տարածութիւն առանձին ինքնավարական երկիր կազմելու համար։

Եւ եթէ մենք աչքի անցկացնելու լինէինք այն տարածութիւնը, որ ուրիշ ազգութիւններ ծրագրում են իբրև իրանց ինքնավարութեան տակ տրամադրելի երկիրներ, կը տեսնենք, որ այնտեղ բացի հիմնական ազգագրական տարրերից, կան որոշ թւով և ուրիշ փոքրամասնութիւն կազմող տարրեր։ Եւ յամենայն դէպս հայ ազգաբնակչութեան քանակութիւնը այնքան չնչին չէ, որ նա իրաւունք չունենար ինքնավարութեան մասին մտածելու, քանի որ եւրոպական հողի վրա կան ինքնավարական փոքր մարմիններ, որոնք հայերից աւելի բազմամարդ չեն։

Հայաստանի հարց չը դնելու պատճառը զուտ հայաբնակ տեղերի փոքրութիւնը չէ և յամենայն դէպս դա միակ պատճառը չէ։

III

Եթէ հայերը չեն դնում հայկական առանձին ինքնավարութեան հարց Անդրկովկասում, այդ նրանք անում են այն պատճառով, որ նրանք աննպատակայարմար են համարում մեր պայմաններում և անիրագործելի։

Հայերը քննում են և կշռում են այն բոլոր նպաստաւոր և աննպաստ պայմանները, որոնք գոյութիւն ունին ներկայումս և կարող են առաջ գալ հէնց որ կը ծագէ առանձին ինքնավարութեան հարց դնելու ժամանակ, այդ քննում են և գալիս են այն եզրակացութեան, որ հայկական ինքնավարութեան հարց յարուցանելը Անդրկովկասում աննպատակայարմար է։ Իսկ նրա իրագործումը կարող է գործնական մատչելի խնդիր դառնալ, երբ այդպիսի մարմնի հաստատվելը կը դառնայ ցանկալի ոչ միայն հայերի, այլ և ռուս ազգի և հայերին շրջապատող ազգերի համար։

Հայերի այժմեան կարիքները, հայերի կեանքի արտադրած մերձաւոր խնդիրները և տենչանքները կարող են լիացում ստանալ և Կովկասեան ինքնավարութեան շրջանակում իրանց մի քանի ուրիշ առաւելութիւններով։

IV

Որոնք են Անդրկովկասեան ինքնավարութեան առաւելութիւնները։

Առաջինը չը պէտք է մոռանալ, որ մենք ապրում ենք Ասիայի մի անկիւնում, ուր փոքր տարածութեան վրա շատ ազգութիւններ են ապրում և մենք յաճախ շփվում ենք վրացու, Թուրքի, քիւրդի, ասորու, եզիդի, յոյնի, Թաթարի և լեռնական ազգերի հետ։ Մենք պէտք է լաւ գիտենանք, որ ուրոյն դնելով մեր կեանքի հարցերը, մենք վիհեր ենք բաց անում մեր ու մեր հարևանների մէջ։ Իսկ որպէս զի մենք կարող լինենք փոքր ի շատէ ուժեղ կուլտուրական դեր կատարել, կարեւոր է, որ մենք մեր բարօրութեան խնդիրների մի նշանաւոր մասը կապենք ընդհանուր երկրի և մեր դրացիների բաղդի և վիճակի հետ։

Լինենք երջանիկ, բարգաւաճ և բաղդաւոր ոչ միայն հայերս, այլ և մեր երկրում ապրող բոլոր մեր դրացիները մեզ հետ միասին։

Մեր բաժանումը մեզ վնասել է և կը վնասէ։ Որքան էլ մենք ուժեղ լինենք առանձին վերցրած, իսկ եթէ մեր հարևան վրացին, Թուրքը և ուրիշ մի ազգութիւն աղքատ են, անկիրթ են, մենք էլ կը վառվենք նրանց հետ միասին։

Իսկ բոլորս միացած, միահամուռ ոյժերով, մենք Անդրկովկասի ընդարձակ տարածութեան վրա կը ստեղծենք մի մեծ բարեշէն երկիր, որ կը լինի բաւականաչափ պատկառելի մեծութիւն և կունենայ թէ տնտեսական և թէ բարոյական պատկառելի ոյժ, խոշոր կուլտուրական գործեր կատարելու համար։

Այդ մեծութիւնը, կապված ռուս ազատագրված ժողովրդի հետ, կը մշակէ ընդարձակ կեանքի ծրագիրներ, որոնք կը բեղմնաւորեն բոլոր այն ազգերի առաջադիմութիւնը, որոնք միացած են մի քաղաքական մարմնի մէջ։

Մենք կը վերադառնանք այս հարցին։

Ա. Քալանթար

ՍՈՍԿԱԼԻ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Մեր հայրենիքը և ժողովուրդը այսօր փոխանակ տօնելու մարդկութեան մեծ Վերանորոգչի ծննդեան 1906-րդ տարեդարձը, Վերանորոգչի, որ աշխարհ եկաւ յատկապէս տանջված երկրին խաղաղութիւն բերելու, ընդհակառակը, դիմաւորում է այդ տօնը հրդեհների բոցավառութեան, ժողովրդական արեան ծովի, հազարաւոր անմեղ զոհերի, իր լաւագոյն զաւակների և մուրացողների դիակների մէջ։

Այսօր ոչ թէ կեանքի, վերածնութեան հրեշտակներն են երգում, այլ մահվան, սրածութեան սոսկալի ճիւաղներն են բարձրացնում իրանց վայնասունը։

Եւ փառաբանական շարականները տաճարներում այսօր չեն կարող, անզօր կը լինեն ներշնչել մեր մէջ այն համոզմունքը թէ խաղաղութիւնը կիջնէ երկրի վրա, թէ նա կարող է շուտով իջնել։ Երբէք մեր հայրենիքը և ժողովուրդը չէ եղել, չէ զգացել իրան այնպէս յուսահատ, չարչարված, ինչպէս այժմ. երբէք անցեալը նրան չէ թւացել այնպէս գարհուրելի, ներկան՝ այնպէս ծանր և ճնշող, իսկ ապագան՝ այնպէս խորհրդաւոր, չարագուշակ, ինչպէս այսօր, Քրիստոսի ծննդեան 1906-րդ տարեդարձի օրը։

Ճիշտ է, անցեալ 1905 թւին, Ծննդեան օրը նոյնպէս ուրախութեամբ չը տօնեցինք, ճիշդ է, անցեալ տարի այս օրս էլ մենք հայերս համակված էինք կսկիծով և ցաւով, բայց մեր կսկիծը, ցաւը բարոյական էր, մենք կրում էինք գօլիցինեան ծանր ռէժիմի ծանրութիւնը մեր ազգայնական կեանքի ասպարիզում. ճիշդ է անցեալ տարի այս օրս շարունակվում էր մի անմիտ պատերազմ և հազարաւոր կեանքեր, մատաղ կեանքեր կորչում էին, բայց այդ բոլոր կսկիծները, ցաւերը, ծանրութիւնները կրում էինք, որովհետև մեր առաջ յոյս ունէինք, ահագին յոյս և հաւատ, որ մեզ լաւ ապագայ է սպասում, բախտաւոր ապագայ։ Մենք զգում էինք, որ շուտով վրա կը հասնի մեզ համար ահագին ստեղծագործական և շինարարական աշխատութիւն։

Բայց այն, ինչ որ անցաւ 1905 թ. ընթացքում, բերեց մեզ յուսահատութեան, հիասթափման։ Որքան էլ Թուրքական անակնկալ, վայրագ արշաւանքը մեր դէմ՝ ծանրացրեց մեր վիճակը, բայց հայ ժողովրդի բողոքի յաղթական տանելը եկեղեցական-ազգային և դպրոցական կալուածների ու խնդիրների վերաբերմամբ, և ապա հոկտ. 17-ի մանիֆեստը, որով մեզ խոստացվում էին սահմանադրական լայն իրաւունքներ և ազատութիւններ, որոնցով մենք մեծապէս կարող էինք օգտվել թէ իբրև քաղաքացիներ և թէ իբրև հայեր—ներշնչեցին մեր մէջ ոգևորութիւն, եռանդ և հրճուանք։ Եւ դա շատ հասկանալի էր, հին ռէժիմի, բռնապետական, կամայական ռէժիմի անպէտքութիւնը ապացուցված էր. սկսվեց մեծ և յամառ պայքար լաւագոյն կեանքի համար. աւետվեց նոր դարագլուխ։ Ռէակցիայի բոլոր փորձերը՝ երկարացնել իր գոյութիւնը, ջարդուփշուր եղան հասունացած ժողովրդի յամառութեան դէմ։

Սակայն երբ աւետված և խոստացված փրկութեան իրագործումը ձգձգվեց, ժողովուրդը սկսեց հիասթափվել և պահանջել երաշխաւորութիւններ, թէ այդ խոստացվածը կը կատարվի։ Իսկ մեր երկրում Թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումները չեն դադարում։ Ամբողջ երկրում շարունակվում է եղբայրադաւ կռիւը, թափվում է ժողովրդական արիւնը, թափվում է քաղաքներում, գիւղերում և այդ եղբայրասպան կռուի վերջը չենք կարող նախատեսել։

Եւ ահա այսօր, փոխանակ ուրախանալու, միմեանց շնորհաւորելու, նոր կեանք, վերածնութիւն աւետելու միմեանց, մենք տառապած, երերուն, անվստահ հարցնում ենք միմեանց. մի՞թէ հին կարգը դարձեալ գլուխը պէտք է բարձրացնէ. մի՞թէ դեռ պէտք է շարունակենք ողբալ մեր հայրերին, եղբայրներին, զաւակներին։ Մի՞թէ Քրիստոսը, մեծ Վերանորոգիչը իսկապէս չի ծնվի մեր սրտերում. մի՞թէ եկող տարի այս ժամանակ չը պէտք է գոռանք. «Խաղաղութիւն երկրում, հաճութիւն մարդկանց մէջ»։

Հաւատանք որ եկող տարի կը լսենք փառաբանիչ հրեշտակների երգը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեզ հաղորդում են, որ վերջին օրերս Թիֆլիս են հասնում կեղծ հեռագիրներ հայ-Թուրքական ընդհարումների բնաւորութեան մասին։ Հեռագիրների մէջ հաղորդված են լինում սուտ տեղեկութիւններ հայ խմբերի, հայերի դէպի ռուսական զօրքերը ունեցած տրամադրութեան մասին։ Անկասկած է, որ կայ մի դաւ, որ ձգտում է չար նպատակների։ Մեզ յայտնի է, որ փորձեր են եղել կեղծ, հայատեաց հեռագիրներ ուղարկել Զարիշատ, Թիֆլիս և նոյն իսկ Անգլիա։ Պրօվօկատօրական հեռագիրների նպատակն է ցոյց տալ հայերին իբրև անհաշտ խռովարարներ, որոնք ագրեսիվ նպատակներ ունեն ուղղված ռուսական զօրքի, պարսկահպատակների և Թուրքահպատակների դէմ։ Որքան էլ թեթևամիտ և ծիծաղելի համարվի այդ կեղծիքը, սակայն նա կարող է որոշ դեր կատարել, միամիտներին մոլորեցնել և տխուր հետևանքներ առաջ բերել իրականութեան մէջ։

—

Երևանից հեռագրում են պաշտօնական աղբիւրից հետևեալը. «Դեկտ. 28-ի երեկոյեան քաղաքի ծայրում սպանվեցին 2 հայ։ 29-ին ցերեկով քաղաքի զանազան մասերում սպանված են 2 Թուրք, վիրաւորված են 3-ը։ Քաղաքը յուզված վիճակի մէջ է։ Այդ օրը խանութները փակ էին։ Դեկտ. 30-ին խանութների մի մասը բաց էին»։

—

Քարվանսարայից, յունվարի 4-ին, 12 ժ. 40 րոպէին մեզ հեռագրում են.

«Չորրորդ օրն է Թաթլիքէնդ գիւղը շրջապատված է սալախլինցի, կրախկէսամանցի, դախկէսամանցի, աչքէկնացի և խանուխլարցի Թուրքերով, թւով 5000 մարդ. հրացանաձգութիւնը շարունակվում է։

—

Թաուզ. 2 յունվարի, գիշերվայ ժամը 6 և 55 րոպէին։

Թաուզ կայարանից հինգ վերստ հեռաւորութեան վրա սկսված է Թուրք-հայկական կռիւը։ Թուրքական գիւղերը չեն կարող դիմանալ յարձակմանը և հայերը շարունակելու են մինչև կայարանից ցած գտնված գիւղերը։

Կայարանի պաշտպանութեան համար ունենք միայն 8 զինուոր։ Լուրերին նայելով կռւող հայերի թիւը 800-ի է հասնում։

Կայարանից լսվում են ուժեղ հրացանաձգութեան ձայներ. ծառայողները սարսափի մէջ են, խնդրում են օգնութիւն։

Թօքմաչեվ

—

Մինգեչաուր. 2 յունվարի, գիշերվայ ժամը 8 և 32 րոպէին.

Յունվարի 1-ի գիշերը, ժամը 11 և 20 րոպէին, անյայտ չարագործները Թալանեցին տեղային կահ կարասիքով բարձած մի վագօն։

Թալանի ժամանակ լսվեց երկու անգամ հրացան արձակելու ձայներ. գնդակըն ուղղված է եղել կայարանապետի գրասենեակին և առանձնարանին. գնդակի հարուածից ջարդված են պատուհանների շրջանակները. մարդկային զոհեր չեն եղած։

—

Կիւրօքչայ 3 յունվարի,

Յունվարի 2-ին Թուրքերը երրորդ անգամ զինված յարձակում գործեցին կայարանի վրա։ Առաջին երկու յարձակումների ժամանակ Թալանեցին տնային ապրանքներին, իսկ այժմ ներս թափվեցին ուղղակի գրասենեակը և վինտօվկա հրացաններն ուղղելով կրծքիս պահանջում էին փող։ Խուզարկեցին գրասենեակը և իմ գրպաններս. դուրս քաշեցին ինձ գրասենեակից և հարուածելով պահանջում էին կամ յանձնեմ փողերը և կամ յայտնեմ ում մօտ են գտնվում փողերը։ Շնորհիւ այդ րոպէին կայարանին մօտեցող գնացքի, որի մէջ կային և պաշտպանող զինուորները, Թուրքերն անյայտացան։ Ծառայողները սարսափի մէջ են, մի քանիներն արդէն փախել են։ Խնդրում ենք ուղարկել մեր պաշտպանութեան համար զօրք, գոնէ 20 զինուոր, հակառակ դէպքում բոլոր ծառայողները թողնում են կայարանը։

Բուսիեվ,

—

Ղազախի գաւառի Բարանա-գիւղից մեզ հաղորդում են հետևեալը.

Մեր ճանապարհից անյայտացած ինն հոգի հայերը, որոնց մասին իր ժամանակին յայտնված էր մամուլի էջերում, Թուրք ոսկէպար գիւղի մօտ «ղարահամզի» կոչված գոմերում, գտնվել են կիսայարված. ինչպէս երևում է պրիստաւի տեղապահը գնաց տեսաւ դիակների մնացորդները։

Այս բարբարոս գազանութիւն կատարող խմբի գլխաւորներն յայտնի են տեղական ժողովրդին։

Արշակ Տէր-Խաչատրեանց

—

Շուշուց մեզ հեռագրում են յունվարի 3-ին, երեկոյեան ժամը 6-ին։

Դեկտեմբերի 30-ին, ահագին թւով քիւրդեր յարձակումն գործեցին ղարաղշլաղի վրա առաջնորդութեամբ մի մօլլայի։ Հայերը քաջաբար պաշտպանվեցին։ Երեկոյեան Թուրքերը յետ մղվեցին դիրքերից, նրանցից շատ մարդ է սպանված, հայերից միայն մի քանի հոգի։»

—

Յունվարի 3-ին Գորուց եկող զինուորական գնացքով մի ճանապարհորդ պատմեց մեզ հետևեալը։

«Զինուորական գնացքը Թիֆլիսից ցանկացել է Բաթումի գծով անցնել տօնէլը. սակայն հէնց այդ տօնէլի մօտ պատահել է զինված դիմադրութեան, տեղական ժողովրդի կողմից։ Մօտակայ գիւղերից տօնէլի մօտ են հաւաքված մօտ 70 հոգի զինված մարդիկ և արգելում են նոյնիսկ զինուորական գնացքներին շարժվել։ Տօնէլի մօտ հրացանաձգութեան ժամանակ սպանված են երեք կօզակ և մէկը վիրաւորված է։ Ժողովրդի կողմից սպանված են 17 հոգի։

Տօնէլի շուրջը գտնված գիւղերը կրակի բռնվեցին և այրված են, իսկ գնացքը վերադարձաւ, ծառայողներից շատերն էլ վերադարձել են։ Պատմում էին որ նորից գալու է զինուորական գնացքը աւելի շատ զինուորներով և պատրաստութեամբ, որովհետև եղած ուժով անհնար է կռվել այնտեղ գտնված 700 միլիցիօնների դէմ։

Այրված է նաև Միխայլօվօ գիւղը, բացառութեամբ երկաթուղային ծառայողների բնակարանների, որովհետև գիւղացիք նախօրօք չեն նախազգուշացրել տօնէլի մօտ խմբված միլիցիօնների մասին։»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԲԱՑ ՆԱՄԱԿ

«Հայաթի» 114 համարում (դեկտ. 6) կարդում ենք հետևեալը.

Բաց Նամակ հայերին. «Անդրկովկասեան երկրի Դաղստանի շրջանի և Կազանի նահանգի այլ և այլ քաղաքներից եկած և Բագւում բնակված մահմեդականները՝ ի մի հաւաքվելով՝ Պարսկաստանի ժողովրդի և Բագուի մահմեդականների վրա ձեռք բարձրացնող և շիաների հետ թշնամի ենք, սիւննիների հետ բարեկամ ենք ասող հայերի ընթացքն ու վարմունքը ուշադրութեան առնելով՝ ամբողջ Կովկասի հայերին յայտարարում ենք, որ իսլամական աստուածայայտ կրօնով փառաւորված զանազան ցեղերի ամբողջութիւնը մի ազգ է նկատվում և իսլամական աստուածայայտ կրօնը իր էութեամբ սիւննի և շիա բաժանումը չէ ընդունում։ Հետևաբար ո՛չ մի ժամանակ հնարաւոր չէ, որ մեզ բաժանեն կրօնապէս և մի ժողովուրդը միւսի դէմ հանեն։ Եւ այդ յանցաւոր միտքը ունեցողներին ազդարարում ենք, որ յանուն մարդասիրութեան այդ վատ ձեռնարկից յետ կենան։ Դարձեալ կրկնում ենք, որ եղբայրութիւնն ու հաւասարութիւնը իսլամական աստուածայայտ կրօնի հիմքերն են։ Հետևաբար մի եղբօր երջանկութիւնն ու բարեբաղդութիւնը և նրա դժբաղդութիւնն ու փորձանքը, պատկանում են և միւս եղբօր։

Հայեր, մենք ձեզանից խնդրում ենք, որ հարևանի արեան պատճառ եղող այդ սպանութիւններն ու կոտորածները մի կողմ թողնէք, հակառակ դէպքում ամբողջ երկիրը կընթարկվի ամենասարսափելի դժբաղդութեան»։

Այս «Բաց Նամակ»-ի տակ ստորագրված է միայն «ստորագրութիւններ» բառը։

Դաղստանցիներն ու կազանցիները, ինչպէս մեր ընթերցողներին յայտնի է, պատկանում են սիւննի դաւանութեան։ Թէ ո՞վքեր են վերոյիշեալ գրութեան տակ ստորագրողները և քանի՞ հոգուց բաղկացած են, մենք չը գիտենք. միայն մեր կողմից կաւելացնենք հետևեալը. հայերը, որքան մեզ յայտնի է, չեն ասել բընաւ, թէ սիւննիները մեր «բարեկամներն» են և շիաները մեր «թշնամիները», և երբէք չեն աշխատել, ինչպէս կարծում են «Բաց Նամակի» հեղինակները, մի դաւանութեան պատկանող մահմեդականներին հանել միւսի դէմ։ Դա մի ձրի մեղադրանք է։ Մենք գիտենք միայն այն, որ Կովկասի արիւնոտ ու առ յաւէտ ամօթալի դրամայի հերոսները շիաներն են և նրանք են յայտարարել անխնայ ու վայրենի պատերազմ հայերի դէմ։ Իսկ սիւննիները, շտապում ենք յանուն արդարութեան հաստատել, ձեռնպահ են մնացել այդ ոճրագործ շարժման մէջ և նոյն իսկ ընդդիմացել են չար խորհուրդներին ու գործողութիւններին։ Հայերը նկատի ունենալով ահա այդ հանգամանքը, զգուշացել են, և կը զգուշանան նոյնպէս այսուհետև, ձեռք բարձրացնել այն մահմեդականների վրա, որոնք ցանկանում են ապրել մեզ հետ բարի հարևանութեամբ, եղբայրաբար։ Թիֆլիսի Թուրք-հայկական ընդհարման ականատեսները, հայ, Թուրք, վրացի, ռուս, տեսան և կարող են վկայել—կարող են վկայել մանաւանդ Թիֆլիսի պարսից հիւպատոսարանի պաշտօնեաները,—որ հայերը ո՛չ միայն մի մազին անգամ չեն դիպչել «Պարսկաստանի ժողովրդին», այլ և ապահովութեան համար, կառքերով բոլոր պարսկահպատակներին փոխադրել են հիւպատոսարան։

Իսկ ինչ վերաբերում է դաղստանցի լեզգիներին, հայերը նրանց հետ վարվել են նոյնպէս ազնւաբար։ Գտնվել են հայեր, որոնք Թիֆլիսի Թուրքական մասում ապրող առևտրական լեզգիներին՝ ընդհարման ընթացքում, տուել են ամեն տեսակ ապահովութիւն, օգնել են նրանց ամեն կերպ. երկիւղից՝ իրանց բնակարաններից դուրս չեկող լեզգիներին արիութիւն ու սիրտ են ներշնչել, գնել են նրանց համար կենսական պիտոյքներ, պահպանել են նրանց գոյքն ու փողը։ Եւ իբրև պերճախօս ապացոյց այս բոլորի, մեր խմբագրութիւնն ստացել է յիշեալ առևտրական լեզգիներից, երախտագիտութեան և շնորհակալութեան մի թուղթ, որը, դեռ ևս ժամանակ չէ ունեցել հրատարակելու։

Ահա իրողութիւնը։ «Բաց Նամակի» տակ ստորագրող մահմեդականները լաւ կանէին, եթէ իրանց հաւատակիցներին հասկացնէին, թէ ո՛րքան անմիտ ու կործանարար է, տգիտութեամբ գործիք դառնալ զանազան մութ ոյժերի, պրօվօկատոր բիւրոկրատիայի. հայերը վաղուց համոզվել են, որ իրանք զոհերն են մի դժոխային ինտրիգայի, և յանուն ընդհանուր հայրենիքի բարօրութեան, սրտանց կանչում են խաղաղութիւնը, բայց դժբաղդաբար իրանցից չէ կախված հաստատել խաղաղութիւնը, որովհետև մահմեդական ամբոխը՝ դեռ ևս չափազանց տգէտ, չափազանց անգիտակից, չէ կարողանում թափանցել նիւթված ինտրիգայի խորքը և դիմադրել չար խորհուրդներին։ «Բաց Նամակի» հեղինակները, ինչպէս և բոլոր գիտակից մահմեդականները, եթէ իսկապէս ցանկանում են վերջացած տեսնել կորստաբեր թշնամութիւնները, պէտք է նուիրվեն այդ առաքելութեան—բաց անել մահմեդականների աչքը։ Զ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Դաղէթ-Խաչէն գիւղ, Բորչալուի գաւառ, դեկտեմբերի 1-ին։ Թուրքերի յարձակման նշանը մեզ մօտ երևաց նոյեմբերի 23-ին, երբ Բորչալուի Թուրքերը յարձակվեցին Սանդար կայարանի վրա։ Այդ դէպքից յետոյ Եկատերինենֆելդ, Կիանէթ, Ակաուրթ, Զօլղվէջ, Ռատանի և այլ գիւղերի հայերը տեղափոխվեցին Դաղէթ, Շամշուլդա և Սամղարէթ հայաբնակ գիւղերը։ Այդ դէպքի մասին աւելի մանրամասն ինձ պատմեց ականատես (սուրհանդակ) Մովսէսը, որը գնացել էր իր խմբով դէպքի վայրը, որը առաջ եմ բերում այստեղ։

Ես գնացի մի տասնեակ զինուորով (կամաւոր) Սամղարէթ գիւղը, տեսնելու գիւղացիների և գաղթածների դրութիւնը։ Ինձ ճանապարհին պատահում էին բոբիկ կանայք՝ երեխաները շալակած։ Մտնելով գիւղը, ուղարկեցի երկու մարդ յայտնելու Բէլի-Կլիւչի գնդի հրամանատարին ժողովրդի դրութեան մասին և օգնութիւն խնդրեցինք։ Հրամանատարը ուղարկում է կապիտան Սերգէյ Յովսէփեանցին 40 զինուորով, որի հետ ես իմ խմբով անցանք Ակաուրթ։ Դեռ Ակաուրթ չը հասած՝ առաջներս կտրեց ահագին Թուրք խուժանը, որը նման էր մորեխի վոհմակի. խուժանը մեզ տեսնելով դիրքեր բռնեց և սկսեց գոռալ «Էյ ռուս եախին գեալմա դաւաջայախ» (Էյ ռուս մօտ միք գալ կը կոտորենք)։ Կապիտանը պատասխանում է. (ղօրխմէյն, բիզ գեղաչյայախ Կիանէթա, սըզա ալ վերմարախ» (միք վախենայ մենք գնում ենք Կիանէթ, ձեզ ձեռք չենք տայ)։ Սակայն Թուրքերը դարձեալ մօտ չեն թողնում և վայրենաբար գոռգոռում են։ Վերջապէս գիւղի տանուտէրի և աղսախկալների միջնորդութեամբ մեզ ճանապարհ են տալիս։

Մտանք Արղութեանի շինութիւնները. տեսնում ենք տները քարուքանդ եղած, փայտէ մասերը ջարդ ու փշուր արած, եկեղեցու գրքերը և զգեստները այրված, մնացածը պատառոտած։ Այս բոլորը տեսնելով նոյն իսկ ռուս զինուորներն էին լալիս։

Այնուհետև անցանք դէպի Կիանէթ։ Կիանէթ չը մտած ճանապարհին տեսանք ցորենը փռված, որը թափվել էր թալան տանող Թուրքերի սայլերից։ Մեզ հետ եղած կիանէթցիք լալիս և մազերը պոկում էին տեսնելով իրանց քրտինքով աշխատածը։ Մտանք գիւղը։ Գիւղում միմիայն շներն էին մնացել, որոնք դունչերը վերև ցցած աղիողորմ ոռնում էին։

Կիանէթում լուր ստացանք, որ Բօլնէք գիւղը ձեռից գնում է, օգնութեան հասէք։ Կիանէթից մինչև Բօլնէք 20 վերստ է։ Հասնում ենք Բօլնէք, որտեղ միայն մի վրացի էր մնացել տանը նստած, իսկ ամբողջ գիւղը տեղափոխվել էր Գորնջուկ գիւղը։ Բօլնէքը ամբողջովին թալանված էր։ Գիշերը մնացինք այստեղ։ Առաւօտեան վաղ նոյեմբերի 30-ին բազմաթիւ Թուրքեր կամենում են գիւղը մտնել, և մեզ շրջապատել, բայց մենք զօրքի հետ միասին մինչև առաւօտեան ժամը 8—5-ը դիմադրեցինք և խուժանը յետ մղեցինք. մեր փամփուշտը հատնելու վրա էր ուստի անցանք Դուվանիս այնտեղ սպասելու մինչև Բէլի-Կլիւչից նոր փամփուշտի գալը։ Միւս օրը փամփուշտի փոխարէն գալիս է դարձեալ մի վաշտ զօրք կապիտան Բրախօվսկու առաջնորդութեամբ, որը եկաւ ոչ թէ խուժանին պատժելու (որովհետև հրամայված չէր), այլ թալանված և թշուառացած ժողովրդին աւելի թշուառացնելու—զօրքը կերակրվում էր հայ գիւղերից։ Թալանված գիւղացիք գալիս և յայտնում էին կապիտան Նորեկ սպայ Բրախօվսկուն իրանց թալանված ապրանքի՝ տաւարի, ոչխարի և ցորենի տեղը և տանողների անունը և խնդրում էին, որ յետ խլի, բայց այդ սպան պատասխանում էր «մեզ հրամայված չէ»։

Թալանված էին նոյնպէս հետեւեալ հայ խանութները և գործարանները՝ Բաշքէչէթի խանութը, Ղարաքիլիսի խանութը, որի դուքանչին մերկ էր ազատվել: Մաթէոսեանների գործատունը, որտեղից 400 կով է տարված, խոտերի դէզեր այրած. Մելիք-Բախտամեանի պանրի գործարանը, որի կովերը տարված են և խոտի դէզերը այրված...

Դաղէթ-խաչէնցիների Ցխնաւ կոչված ձմեռանոցից տարել են 615 գլուխ ոչխար, 6 ձի. սպանել են մէկ դաղեթցի ձկնորսի՝ Աւետիք Առուշանեան անունով և վիրաւորել ձեռքից Արութին Առուշանեանցին. հրացանները տարել (2 հատ) են. փչացրել են 120 պուդ խրամուլ ձուկը, որը պատրաստ էր արտահանութեան համար: Այս կատարել են հետեւեալ Թուրք գիւղերը՝ Մօլլա Բուսատամ, Շորշորէթ, Օրմէշան, Սաջա, Դարբազ:

Խեղճ ժողովուրդ, թալանվես և կեղեքվես դու, մորթոտվեն քո անմեղ զաւակներդ և դարձեալ մեղաւոր ճանաչեն քեզ. այո, մեղաւոր ես, որովհետև ճանաչում ես քո իրաւունքդ, մեղաւոր ես, որովհետև ճանաչում ես մարդկային պատիւը և վերջապէս մեղաւոր ես, որովհետև ծնված ես հայ անուան տակ. ուրեմն դու արժանի չես մարդկային ճոխ սեղանից վայելելու, այլ դու նոխազ ես, քո բուրդդ պէտք է խուզեն, կաշիդ քերթեն և և միսդ վայելեն:

Եր. Յովսէփեանց

ԶԵՄՍՏՎՈՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ

III

Ինչպէս շատ ճիշտ նկատեց ժողովականներից մէկը, «սահմանադիր ժողով» (учредительное собраніе) խօսքերը շատերին վախեցնում են նրա համար, որ այդ խօսքերը իբրև նշանաբան Ռուսաստանում առաջին անգամ գրեցին իրանց դրօշակի վրա ծայրահեղ յեղափոխական կուսակցութիւնները, որոնք նպատակ են դնում իրագործել Ռուսաստանում ռամկավարական հանրապետութիւն: Սակայն ճառախօսներից մի քանիսը պարզ կերպով ցոյց տուեցին, որ այդպիսի ժողովներ շատ անգամ եղել են պատմութեան մէջ առանց հանրապետութեան մասին խօսք անգամ բացելու, որ կոմս Բիսմարկը ինքը, որին ոչ ոք չէ կարող կասկածել որ և է հակապետական ձգտումների մէջ, Գերմանիայի միութիւնը աջողեցնելու համար հրաւիրեց «Սահմանադիր ժողով» և այլն: Չը նայած այդ բացատրութիւններին, համագումարի բիւրօն, որպէս զի իր բանաձևի կողմը գրաւէ և այն անձանց, որոնք պատկանելով զեմստվային ձախակողմեան խմբին խուսափում էին այդ խօսքերը մտցնել րեզօլիւցիայի մէջ, փոխեց ձևակերպութիւնը այսպէս, «ժողովրդական ներկայացուցիչների ժողով, սահմանադիր լիազօրութիւններով հիմնական օրէնք մշակելու համար «съ учредителивими фрунктями для вырАборки основного закона): Եւ այդ ձևով որոշումը ընդունվեց ձայների ահագին մեծամասնութեամբ, 199 ձայնով 23-ի դէմ:

Ապա երկար վիճաբանութիւնների առիթ տուեց այն հարցը, թէ ինչ եղանակով պէտք է լինի ձայնատուութիւնը ներկայացուցչական ժողովի ընտրութեան համար, ուղղակի թէ կրկնակի (прямыя или двухстепенные выборы):

«Ուղղակի» ձայնատուութեան դէմ էին գըլխաւորապէս աջակողմեանները (Գուչկովի կուսակցութիւնը) և մի քանիսը ձախակողմեան կուսակցութիւնից, ինչպէս պրոֆ. Կօվալևսկին: Պէտք է ասել, որ ցաւօք սրտի ես նկատում էի, թէ ինչպէս այդ մարդը, Մակսիմ Մախիմիչ Կօվալևսկին, որը երբեմն երիտասարդութեան խօսքերից մէկն էր և մինչև վերջին ժամանակները Պարիզում համարվում էր ռուսաց առաջադէմ մտքի լաւագոյն ներկայացուցիչների շարքում, այժմ այդ համագումարում ձայնակցում էր երբեմն ամենաչափաւորներին և ընդհանրապէս շատ անգոյն դեր էր կատարում ժողովում: Այդպիսի ագեղ գոյնով հրապարակ են գալիս վերջերումս ռուսաց երբեմն ամենաժողովրդական և առաջադէմ պրոֆեսորները, ինչպէս յիշեալ Կօվալևսկին, պրոֆ. Վինօգրադովը: Վերջինս մի շարք յօդուածներով աշխատում էր հերքել նոյն իսկ ընդհանուր ձայնատուութեան օգտակարութիւնը. իսկ Կօվալևսկին համագումարում ամեն կերպ աշխատում էր «սահմանադիր ժողով», «աւտօնօմիա» խօսքերը դուրս հանել որոշումից և փոխարինել դրանց աւելի «յարմար» խօսքերով...—Երկար վիճաբանութիւններից յետոյ «ուղղակի» ձայնատուութիւնը ընդունվեց ժողովից 174 ձայնով ընդդէմ 32-ի: Այդ փոքրամասնութիւնից ոմանք այն կարծիքի էին, որ քաղաքների համար կարելի է ընդունել ուղղակի ձայնատուութիւն, իսկ գիւղական ազգաբնակութեան համար—կրկնակի. այդ կարծիքին էր յարում և Մ. Կօվալևսկին:

Բացի այդ երկու խնդիրներից, բիւրօյի առաջարկած որոշումը ժողովականների կողմից ընդհանուր համակրութեամբ ընդունվեց, և եղան միայն մի քանի լրացուցիչ առաջարկութիւններ, որոնցից մեծ մասը մերժվեցին ժողովի կողմից, իսկ մի քանիսը ընդունվեցին և աւելացան բիւրօյի որոշմանը, որը յետոյ ամփոփ կերպով ընդունվեց ժողովի կողմից:

Այժմ առաջ բերենք համագումարից ընդունված րեզօլիւցիան իր ամբողջ ծաւալով լրացուցիչ կէտերի հետ միասին:

«Զեմստվային և քաղաքային գործիչների համագումարը, քննութեան առնելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստով և յետագայ դէպքերով ստեղծված քաղաքական դրութիւնը՝ որոշեց.

Արդէն իր առաջին որոշումների մէջ, որոնք կայացել էին անցեալ տարվայ նոյեմբերի 6—9 ժողովում, համագումարը ընդունել էր նոյն ժողովրդական պահանջները, որոնց հաւանութիւնը այժմ տրված է հոկտեմբերի 17-ի հրովարտակով: Ողջունելով այդ հիմնական պետական օրէնքի երևան գալը, համագումարը անհրաժեշտ է համարում, մանաւանդ ի նկատի առնելով դրութեան ծանրութիւնը և Ռուսաստանի ներկայ րօպէի լրջութիւնը, որոշել իր դիրքը դէպի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը և դէպի այն անձինք, որոնք կոչված են նրան գործադրել: Ընդունելով հոկտեմբերի 17-ի մանիֆեստը իբրև թանգագին յաղթանակ ռուսաց ժողովրդի, համագումարը յայտնում է իր կատարեալ համերաշխութիւնը նրա մէջ արծարծած սահմանադրական սկզբունքի հետ և գտնում է, որ նրանց անյապաղ իրագործումը և լիակատար զարգացումը անհրաժեշտ պայմանն է երկիրը խաղաղացնելու համար: Հասարակութեան կողմից այդ խաղաղացմանը նպաստելը կարող էր աւելի իրական լինել, եթէ ինքը կառավարութիւնը ցոյց տար հարկաւոր վճռողականութիւն և հետևողականութիւն մանիֆեստի հիմունքները կեանքի մէջ իրագործելու խնդրում: Ներկայ պարագաներում մանիֆեստի գործադրութիւնը մնում է մինիստրութեան պատասխանատուութեան վրա, իսկ համագումարը իր կողմից հաւատացած է, որ այդ մինիստրութիւնը կարող է յոյս դնել զեմստվային և քաղաքային գործիչների լայն շրջանների աջակցութեան և օգնութեան վրա միայն այն չափով, որ չափով այդ մինիստրութիւնը ճշտութեամբ և հետևողաբար կ[illegible]րագործի մանիֆեստի սահմանադրական սկզբունքները: Իսկ այդ սկզբունքների հակառակ ձեռնարկած ամեն մի քայլ զեմստվային և քաղաքային շրջաններում կը հանդիպի ծայրահեղ դժգոհութեան: Համագումարը գտնում է, որ միակ միջոցը ժողովրդական ներ[illegible]թեան և նրա վ[illegible] [illegible]զինակութիւնը ապահովելու և երկրում կարգ հաստատելու—անմիջապէս հրատարակել օրէնք, որի հիման վրա առաջիկայ ժողովրդական ներկայացուցիչների ժողովի ընտրութիւնները կը լինեն ընդհանուր, հաւասար, գաղտնի և ուղղակի սիստեմի հիման վրա և այդ առաջին ներկայացուցիչների ժողովին տրվում են սահմանադիր լիազօրութիւններ՝ մշակելու համար, Կայսրի հաստատութեամբ, Ռուսաստանի կայսրութեան սահմանադրութիւնը և Լեհական Թագաւորութեան ինքնավարութեան կազմը, կայսրութեան պետական միութիւնը պահպանելու պայմանով: Նոյն առաջին ժողովը պէտք է ռամկավարական սկզբունքներով վերանորոգէ զեմստվային և քաղաքային ինքնավարութիւնը և իրագործէ բոլոր միւս միջոցները, որոնք անհրաժեշտ կը համարվեն նոր օրէնակարգի (правопорядокъ) հաստատութեան համար: Բացի դրանից առաջին ժողովին պէտք է իրաւունք տրվի հաստատել ելմուտքի հաշիւը, մտցնել հողային բարենորոգութեան հիմնական սկզբունքները և ընդունել բանւորական օրէնսդրութեան մէջ անհրաժեշտ րէֆօրմներ:

Երկիրը խաղաղեցնելու համար պէտք է անյապաղ՝ չը սպասելով ժողովրդական ներկայացուցիչների հրաւիրելուն՝ ընդունել հետևեալ անհրաժեշտ միջոցները. 1) Առանձին օրէնքներով իրագործել քաղաքական ազատութեան այն հիմնական սկզբունքները, որոնք յայտարարված են հոկտեմբերի 17-ի մանիֆեստով, և վերացնել ներկայումս գոյութիւն ունեցող ժամանակաւոր կանոնները և բացառիկ օրէնքները, որոնք հակասում են այդ սկզբունքներին,—այդ թւում նախ և առաջ ուժեղացրած և արտակարգ դրութեան օրէնքները: Վերացնել զինւորական դրութիւնը թէ Լեհաստանում և թէ կայսրութեան միւս տեղերում. 2) Հասարակական շրջանների մասնակցութեամբ կատարել յատուկ քննութիւն այն բոլոր կողոպուտների և սպանութիւնների, որոնք սարսափով դղրդեցրին ամբողջ Ռուսաստանը մանիֆեստը հրատարակելու օրերում. հեռացնել պաշտօններից և օրէնական պատասխանատուութեան ենթարկել վարչութեան և ոստիկանութեան ներկայացուցիչներին այն տեղերում, որտեղ տեղի են ունեցել այդօրինակ անկարգութիւններ. 3) Միջոցներ ձեռնարկել, որպէս զի մանիֆեստի սկզբունքները անշեղ կերպով ղեկավարեն ներկայ կառավարութեան բոլոր օրգանների գործառութիւնները՝ սկսած ամենաբարձր, մինչև ամենաստորին պաշտօնեայի, որպէս զի բոլոր մինիստրները, բացի կայսերական պալատի մինիստրից, ենթարկվեն մինիստրների խորհրդին և որպէս զի վարչութեան անձնական կազմը անհրաժեշտ նորոգութեան ենթարկվի. 4) Հնարաւորութիւն ստեղծել սովորական դատավարութեան կարգով քրէական և քաղաքական պատասխանատուութեան ենթարկելու պաշտօնատար անձանց, ինչպէս և բոլոր միւս քաղաքացիներին. 5) Հրատարակել ժամանակաւոր օրէնքներ, որոնք ընդարձակէին զեմստվօների և քաղաքների իրաւունքները հասարակական ապահովութեան պաշտպանութեան խնդրում:

6) Լիակատար ամնիստիա (ներումն) քաղաքական և կրօնական յանցանքների համար:

7) Վերացնել մահվան պատիժը»:

—Ահա համագումարի ընդունած րեզօլիւցիան: Այստեղ ամբողջութեան համար ես մըտցրեցի և Լեհական խնդրի վերաբերեալ երկու տող յաւելումը, թէև այդ որոշումը ընդունվեց բիւրօյի րեզօլիւցիան քուէարկելուց յետոյ այն պայմանով սակայն, որ դա աւելացնվի արդէն ընդունված րեզօլիւցիայի մէջ:

Յ. Ք.

ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՀԱՐՑԸ

Գործադուլի օրերում Թիֆլիսում տեղի ունեցաւ մի ժողով, որի մասին կարևոր ենք համարում տեղեկութիւն տալ մեր ընթերցողներին:

Թիֆլիսի պարբերական մամուլի գործողների մի խմբի նախաձեռնութեամբ կայացաւ մամուլի ներկայացուցիչների մի խորհրդակցութիւն, քննելու գործադուլի ժամանակ մամուլի օրգանների լոյս տեսնելու հարցը:

Խորհրդակցութիւնը ընտրեց նախագահ Ա. Քալանթարին, որը բացեց ժողովը հետևեալ խօսքերով.

«Մեր քննութեան առաջ դրված է լրագիրների լոյս տեսնելու խնդիրը գործադուլի օրերում: Իմ կարծիքով՝ մեր կողմից նախապէս պէտք է պայմանախօսված լինի, որ մենք մեր ներկայ նիստում չենք շօշափում ոչ գործադուլի նպատակայարմարութեան ընդհանուր հարցը և ոչ հրատարակչական գործի առևտրական-արդիւնագործական կողմը. գործադուլների նպատակայարմարութեան ընդհանուր հարցի վերաբերութեամբ կարող են լինել զանազան կարծիքներ գրականագէտների շրջանում. իսկ հարցի առևտրական-տեխնիկական կողմը ներկայումս շօշափում է ոչ միայն հրատարակչական գործը, այլ և արդիւնագործութեան այն բոլոր ճիւղերը, որոնք ենթարկվել են գործադուլի ազդեցութեան: Բացի այդ՝ ես կարծում եմ, որ հարցի դրական լուծումը չէ կախված այն բանից թէ գրաշարները կը ցանկանան աշխատել թէ ոչ. որովհետև գործադուլը ունի քաղաքական ընդհանուր գործադուլի բնաւորութիւն և ոչ մասնաւոր, որը կախված լինէր միայն գրաշարներից: Ուրեմն մեր քննութեան առաջ դրված հարցը սկզբունքի է, ընդհանուր տեսակէտով, բարոյական հարց է: Որքան յայտնի է, նոյն իսկ սօցիալ-դեմօկրատական կուսակցութեան մէջ կան շատ ձայներ, որոնք ասում են թէ մամուլը պէտք է դուրս մնայ գործադուլից: Այդպիսի հայեցակէտ հանդէս էին բերել սօցիալ-դեմօկրատները Պետերբուրգում, երբ քննում էին սօցիալ-դեմօկրատական «Новая Жизнь» թերթի խմբագիր Մինսկու առաջարկութիւնը. իսկ Թիֆլիսում հարցը վճռվել է այն իմաստով, որ յայտարարվել է մամուլի գործադուլ, սակայն բացառութիւն է արված յեղափոխական կուսակցութիւնների թերթերի համար: Այդ հարցի առիթով տարաձայնութիւններ են ծագել նոյն իսկ յեղափոխական կուսակցութիւնների մէջ. բայց անկասկած ցանկալի է, որ մենք պարբերական մամուլի ներկայացուցիչներս՝ յայտնենք մեր հայեցքը այս հարցի մասին: Ես անձամբ այն կարծիքին եմ, որ մամուլի գործադուլ չը պէտք է տեղի ունենայ»:

Գ. Օպօչինին. Պահանջել գործադուլի ժամանակ փակել բոլոր լրագիրները, բացի մի քանիսից, մամուլի գործադուլ չէ, այլ խօսքի ազատութեան սկզբունքի խախտումն է: Դա նշանակում է, որ գերիշխող կուսակցութիւնը փակում է իր տեսակէտով վնասակար օրգանները, այսինքն անում է այն, ինչի դէմ միշտ կռուել է ազատագրական շարժումը: Հազիւ թէ մէկը, որ սիրում է ազատութիւն և հաւասարութիւն, կարող է համակրել այդպիսի մի միջոցի: Իսկ մամուլի գործադուլ անել քաղաքական նպատակների համար աննպատակայարմար է, առաջինը այն պատճառով, որ նա ոչ ոքի չէ կարող վախեցնել և ստիպել մի բան անելու և երկրորդ, որ խօսքը, մարդուն տուած այդ լաւագոյն շնորհքը ամենալաւ զէնքերից մէկն է պաշտպանելու մարդկային իրաւունքը և սխալ է վայր դնել նրան կռուի ժամանակ:

Ա. Կանչէլի. «Возрожденіе» խմբագրութեան կողմից կարող եմ յայտնել, որ մենք այն կարծիքին ենք թէ գործադուլի ժամանակ պարբերական հրատարակութիւնները պէտք է լոյս տեսնեն և եթէ մեր լրագիրը չէ հրատարակվում, դա ունի ներքին խմբագրական պատճառներ, որովհետև խմբագրութիւնը վերակազմվում է:

Ի. Ալիբէգեան. Ես ներկայ էի գրաշարների ժողովին և կարող եմ յայտնել, որ նրանց մէջ մի ստուար մասը ցանկանում է հրատարակել լրագիրները և գործադուլ անելու վճիռը անցաւ միայն 5—7 ձայնի առաւելութեամբ, 400 գրաշարների ժողովում:

Ն. Նեմիրօվիչ-Դանչենկօ. Սկզբունքով աննպատակայարմար համարելով լրագիրների գործադուլը, ես մանաւանդ ընդգծում եմ այն տարօրինակ երևոյթը, որ եթէ գործադուլը անհրաժեշտ է համարվել, վերին աստիճանի անարդարութիւն է բացառութիւն անել յեղափոխական կուսակցութիւնների թերթերի համար:

Ռ. Յովհաննիսեան. միանալով նախկին խօսողին, աւելացնում է իր կողմից, որ պէտք է գործնական միջոց գտնել լրագիրները լոյս ընծայելու:

Լ. Սարգսեան. Մեր առաջ դրված հարցի վրա պէտք է նայել միայն բարոյական տեսակէտով և մեր որոշումը ունի բարոյական նշանակութիւն, իսկ եթէ ցանկանում ենք ապագայում հնարաւորութիւն ունենալ ազդելու մամուլին վերաբերեալ խնդիրների վրա, մենք, մամուլի գործիչներս, պէտք է կազմակերպենք մամուլի մի դաշնակցութիւն:

Գ. Օպօչինին. Այդպիսի դաշնակցութիւն հարկաւոր է, բայց այն պայմանով, որ նրա մէջ մտնեն բացի խմբագիրներից, գրականագէտներից, հաւասար իրաւունքով, նաև գրաշարներ և ցրուիչներ: Այն ժամանակ մենք ինքներս մեր ամբողջութեամբ կազդենք գործադուլ անելու որոշման վրա:

Ա. Արասխանեանց. Ես էլ կարծում եմ, որ լրագիրների գործադուլը աննպատակայարմար է, բայց պէտք է գործը այնպէս կարգաւորել, որ ոչ ոք առիթ չունենայ մեղադրելու հրատարակիչներին եսական-արդիւնագործական ձգտումների մէջ, համեմատած ուրիշ արհեստաւորների և արդիւնագործների հետ:

Հ. Առաքելեան յայտնեց, որ մամուլի գործողների դաշնակցութիւն կազմելու գաղափարը պէտք է պաշտպանել և այն դիտումով, որ այդ դաշնակցութիւնը մտնի մամուլի միջազգային դաշնակցութեան մէջ և որ նա ինքը պատրաստ է այդ առիթով ներկայացնել մի քանի նիւթեր արտասահմանեան փորձերից:

Ժողովականներից մի քանիսը հարց տուին, թէ ինչպէս են վերաբերվում վրաց լրագիրները ներկայ հարցին: Նախագահ Ա. Քալանթար բացատրեց, որ ներկայ խորհրդակցութիւնը գումարված է համաձայնութեամբ մի քանի խմբագիրների, նրանց թւում և «Ցնօբիս Փուրցելի» լրագրի խմբագիր Ջաբադարիի հետ, որը հաճութիւն տուեց խորհրդակցութիւն կազմելու և յայտնեց, որ նրա խմբագրութիւնը շատ կտրական կերպով արտայայտել է իր հայեցքը գործադուլի մասին, համարելով նրան անտեղի:

Ժողովը միաձայն որոշեց՝ պարբերական մամուլի օրգանների դադարումը գործադուլի ժամանակ ճանաչել աննպատակայարմար և ցանկալի համարել մամուլի գործողների դաշնակցութիւն կազմակերպելը:

Դաշնակցութիւն կազմելու և նրա ծրագիրը մշակելու համար խորհրդակցութիւնը որոշեց կազմել նոր նիստեր, իսկ այդ նիստերը գումարելու և հրաւէրներ անելու համար ընտրեց մի կազմակերպիչ յանձնաժողով, որի անդամներ ընտրվեցին. Ա. Քալանթար, Ա. Կանչէլի և Լ. Սարգսեան:

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

(Պատասխան պ. Լէօին)

«Մշակի» № № 242, 243, 244, 245 և 246-ում պ. Լէօն «Բագուի կեանքից» վերնագրով մի ընդարձակ յօդուած է զետեղել, որի մէջ նա շօշափում է հայ սօցիալ-դեմօկրատիայի վերաբերմունքը դէպի մի քանի սկզբունքային խնդիրներ: Դիտողութիւնների նիւթ ու առիթ տուել է նրան «Баку» թերթը իր մի քանի յօդուածներով՝ գրված հայկական կեանքի և գրականութեան մասին:

Եթէ մենք ներկայ տողերով ցանկանում ենք մի կարևոր բացատրութիւն տալու, իբրև պատասխան պ. Լէօին, ապա այդ մասամբ հարկադրված հայ սօցիալ-դեմօկրատի պարտականութիւնից և մասամբ թիւրիմացութիւններ փարատելու օբեկտիւ մոտիվից: Իսկ թիւրիմացութիւններ և սխալ հասկացողութիւններ՝ հայ սօցիալ-դեմօկրատների վերաբերմամբ, բաւական շատ ու խոշոր են վերոյիշեալ յօդուածի մէջ:

Նախ փակագծում նկատեմ, որ հայ սօցիալ-դեմօկրատիա՝ իբրև մի ուրոյն կազմակերպութիւն, և հայ սօցիալ-դեմօկրատ, սօցիալ-դեմօկրատներ՝ իբրև անհատներ, միանգամայն տարբեր հասկացողութիւններ, մէկը միւսին անպատասխանատու մեծութիւններ են: Հայ սօցիալ դեմօկրատիա—դա սօց.-դեմ. բանւորական հայ կազմակերպութիւնն է, իբրև մի ինքնուրոյն ու ինքնամփոփ կազմակերպութիւն մեր իրականութեան մէջ: Իսկ առհասարակ հայ սօցիալ դեմօկրատները, անհատներ են, որոնք ոչ միայն հայ կազմակերպութեան անդամները կարող են լինել, այլ և Ռուսաստանի կուսակցութեան (սօց.-դեմ.) հայ անդամները: Այս տարբերութիւնը ի նկատի չառնվելով յօդուածի մէջ և մէկը միւսին պատասխանատու համարելով, դուրս է գալիս և՛ այն թիւրիմացութիւնը, որ «Баку» թերթի առհասարակ հայ սօց.-դեմ. աշխատակիցները համարվում են սօց.-դեմ. բանւորական հայ կազմակերպութեան անդամները, և՛ այն, որ ամեն մի հայ սօցիալ-դեմօկրատ անհատի գրածն ու ասածը (ճիշտ թէ սխալ) վերագրվում է հայ կազմակերպութեան:

Այսքանը փակագծի մէջ.

II

Պ. Լէօի յօդուածը խիստ տեղին առիթ է տալիս մեզ—և դրա համար շնորհակալ ենք նրան—հէնց սկզբից և եթ անելու հետևեալ ընդհանուր նկատողութիւնը:

Ցաւալի է տեսնել մեր մէջ, թէ ինչպէս այն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՄԻ ՊՍԱԿԸ

(Ճրագալոյցային պատմուածք)

—

Հինգ օրից ի վեր Թուրքերը պաշարել էին Ս. գիւղը:

Նրանք տարածվել էին մի ընդարձակ դաշտի վրա, որ գտնվում էր Ս. գիւղի հանդէպ և բաժանված էր նրանից մի մեծ հովիտով, որի միջից հոսում էր մի վտակ: Այդ հովտից և վտակից պէտք էր անցնել և բարձրանալ դէպի բլուր, որի լանջերի վրա շինված էին գիւղական տնակները: Բլրի գագաթը ներկայացնում էր մի լայն սարահարթ, որ ծառայում էր քեօշանի տեղ և ուր կառուցված էր շինական անպաճոյճ եկեղեցին: Այդ սարահարթը վերջանում էր վիթխարի ժայռերով, որոնք մի բնական ամրութիւն էին կազմում և այդ կողմից գիւղը անառիկ և անմատչելի կարելի էր համարել:

Գիւղը վերցնել յարձակմամբ հեշտ չէր, քանի որ պէտք էր մտնել նախ հովիտը և ապա բարձրանալ բլուրը, որի զանազան կողմերում զինւորված հայ կտրիճ երիտասարդներ արթուն կերպով հսկում էին իրանց դիրքերից Թուրքերի գործողութիւնների վրա: Սակայն երկարատև պաշարմամբ, կտրելով գիւղի հաղորդակցութիւնը քաղաքի և շրջակայ գիւղերի հետ, կարելի էր ստիպել նրան անձնատուր լինել սովից:

Գիւղացիները ունէին ցորենի մեծ պաշար հորերում, ուստի և հացի մասին անհոգ էին, բայց նրանց մեծ մտատանջութիւն էր պատճառում ջուրը. գիւղի միակ աղբիւրը, որտեղից ամեն առաւօտ և երեկոյ ջահել հարսները և աղջիկները կուժերով ջուր էին կրում և ուր գիւղի նախիրը գնում էր խմելու, գտնվում էր բլրի ստորոտում, վտակից մի քիչ բարձր. Թուրքերը կարող էին պատսպարվել հովտի ծառերի և ժայռերի ետևում և գնդակահարել աղբիւրին մօտեցողներին: Թէև նրանք դեռ փորձ չէին արել մտնել հովիտը, բայց երևի այդ շուտով տեղի կունենար, երբ նրանց թիւը աւելի կըստուարանար:

Դիրքերից դիտող պահակները տեսնում էին որ ամեն օր մրջիւնի նման հաւաքվում էին դաշտում Թուրքերը և ճանապարհը քաղաքի կողմից լցված էր սայլերով, արաբաններով, ֆուրգոններով, որոնցով Թուրքերը յոյս ունէին երևի, տանել մեծ աւար: Սայլերի շուրջը վխտում էին ոտաբոբիկ կանայք, ոստոստում էին մերկ և ցնցոտիապատ մանուկներ, չը նայելով որ սաստիկ ցուրտ էր և գետինը ձիւնապատ: Տեղ տեղ վառված էին մեծ խարոյկներ, որոնց շուրջը նստած էին իրանց մեծ մեծ փափախներով աւազակաբարոյ Թուրքերը և պատրաստում էին փայտեայ շամփուրների վրա ոչխարի մսի խորովածը կամ քուլլամայ էին պատրաստում,

Մի քանի ծերունիներ էլ ուղղակի ձիւնի վրա եափունջիները տարածելով նամազ էին կատարում:

—Ախ, ախ, Յակոբ, ասաց դիրքերից մէկի վրա պահակութիւն անող երիտասարդ Արամը. մի տես այն քաւթառ Հասանը, որ հարիւր անգամ մեր օջախի գլխին նստած խորոված է կերել, ինչպէս է նամազ անում. երևի խնդրում է Մահմէդին, որ այժմ տայ իր հալից ընկած բաղուկներին. մեզ, գեավուրներիս, սպանող անելու: Ձեռքս քոր է գալիս, ճըշմարիտ. կամենում եմ գնդակս հասցնեմ կըրծքին, որ էլ գլուխը չը բարձրացնէ. հը, ինչ ես ասում.

—Գժութիւն մի արա, Արամ, հազար անգամ քեզ ասել եմ, որ զուր տեղ չը պէտք է փամփուշտ փչացնել. այ, երբ այդ անիծածները կը մտնեն ձորը, այն ժամանակ կռանդ այժմ տուր, ինչքան կարող ես: Վախենում եմ, որ այս գիշեր նրանք չը մտնեն ձորը և թագ չը կենան ժայռերի և մացառների մէջ:

—Թող մի մտնեն. ես բացի գնդակներից, մի փառաւոր խաղ ես պատրաստել եմ նրանց համար: Տեսնում ես այս ժայռը—և Արամը մատով ցոյց տուեց մի մեծ ժայռ, որ մի քիչ հեռու բարձրանում էր,—ես արդէն փորել եմ նրա տակը. բաւական է մի զօրեղ հարուած, ցնցումն, որ նա գլորվի ձորը և ջախջախէ տասնեակ Թուրքեր, որոնք կը համարձակվեն մօտենալ աղբիւրին: Բայց այս ինչ է. ինչու է եկեղեցու զանգակը ղօղանջում:

—Երևի տէրտէրը և մեր ծերակոյտը խորհրդի են հրաւիրում, դու լաւ դիտիր, գնամ տեսնեմ ինչ կայ. Հռիփսիմէին կասեմ, որ քեզ համար ուտելու ինչ կայ, տայ բերեմ:

Այս անունից Արամը կարմրատակեց. նրա աչքերը փայլեցին ուրախութեամբ, բայց շուտով կարծես մի մռայլ մտքից ցնցված, նա տխուր և վհատած հարցրեց.

—Ասա, Յակոբ-ջան, ասա ինձ ճշմարիտ, քոյրդ, նշանածս սիրում է ինձ, թէ միայն հօրդ կամքին է հպատակում: Այն միտքը, թէ նա ինձ չէ սիրում, տանջում, տոչորում է ինձ և ես արդէն վճռել եմ անելիքս այդ դէպքում. Թուրքերի հետ կռիւը կապատի ինձ տանջանքից, բայց, ինչ թագցնեմ քեզանից, Թուրքերի գնդակից սպանվելուց առաջ, ես պէտք է շնորհատակ անեմ այն անզգամ Խաչատուրին, որ յոյսը դրած իր հօր հարստութեան վրա, կամենում է խլել ձեռքիցս իմ նազելի Հռիփսիմէին: Ես չեմ դիմանայ այդ ցաւին. ինձ միայն միամտացնում են և փըրկում յուսահատութիւնից քո եղբայրական կարեկցութիւնը և քո խօսքերը:

—Դու դարձեալ, Արամ, քո զուռնան ես փչում. ամօթ չէ՞ քեզ պէս տղամարդի համար այդպէս վհատել, այն էլ այսպիսի ծանր րոպէում: Մի թէ գլխիդ փափախ չունիս դրած: Ես քեզ ասել եմ և կրկնում եմ. քոյրս, Հռիփսիմէն քեզ է սիրում, քո արևով է երդվում և որքան ես կենդանի եմ, նա բացի քեզանից, ուրիշի կին չէ կարող դառնալ: Մի թող ազատվենք այս Թուրքերի պատուհասից և քո հարսանիքդ կը կատարենք ամենափառաւոր կերպով:

Զանգակը նորից հնչեց, այս անգամ աւելի զօրեղ և շտապ:

Յակոբը, Ս. գիւղի քահանայի որդին, արագ արագ քայլեց դէպի բլրի գագաթը և դիմեց դէպի եկեղեցին, ուր արդէն հաւաքվել էին գիւղի աղսաքալները:

Նա մի գեղեցկադէմ, առոյգ, կորովի, 30 տարեկան երիտասարդ էր, բաւական կրթված, ուսումը ստացած լինելով Գ. քաղաքի հայոց ծխական դպրոցում և ամուսնացած լինելով, ունէր արդէն երկու զաւակ,—մի տղայ և մի աղջիկ: Նա հօր աչքի լոյսն էր: Իբրև հին, նահապետական կենցաղի և, աշխարհայեացքի մարդ, Տէր-Բարսեղը իր տան, օջախի լոյս համարում էր միայն Յակոբին, իսկ Հռիփսիմէին միայն օտարի ապրանք, որ պէտք է աշխատել տեղաւորել լաւ տեղ, մտցնել մի հարուստ տուն: Գ. քաղաքի մանր առևտրական խօջա Մինասը, պէտք ունենալով տէր-Բարսեղի ազդեցութեան և հեղինակութեան գաւառում, առաջարկել էր Հռիփսիմէին տալ իր որդի Խաչատուրին, մի տգեղ և փչացած երիտասարդի, որ յոյսը դրած հօր հարստութեան վրա, աւելացնում էր միայն քաղաքի շռայլ և պօրտաբոյծ թափառաշրջիկների և անգործների թիւը: Բայց Հռիփսիմէն սիրում էր իրանց դրացուհի պառաւ Սանամի տղին, 25 տարեկան, գեղեցկատեսիլ, իր քաջութեամբ և ուրախ բնաւորութեամբ յայտնի Արամին, որ նոյնպէս սիրահարված էր Հռիփսիմէի վրա: Սակայն Յակոբը, որ անկեղծ սիրով և իբրև ընկեր սիրում էր Արամին, վճռական կերպով յայտնել էր հօրը, որ թոյլ չի տայ Հռիփսիմէի ամուսնութիւնը Խաչատուրի հետ և Հռիփսիմէի նշանածը միայն Արամը կարող է լինել: Որդու այս կտրուկ յայտարարութեան առաջ, տէր-Բարսեղը չէր վստահանում առաջ քշել իր ծրագիրը և սպասում էր պատեհ և նպաստաւոր առիթի: Ծննդեան տօներին խօջա Մինասը պէտք է իր տղի հետ հիւր գար գիւղը և մատանին բերէր նշանադրութեան համար, ուստի տէր-Բարսեղը շատ անհանգիստ էր և դեռ չէր որոշել ինչ դիրք բռնել, բայց Թուրքերի անակնկալ յարձակումը և գիւղի պաշարումը մոռացնել տուեց այդ հոգսը...

Երբ Յակոբը մտաւ եկեղեցին, տէր-Բարսեղը արդէն կանգնած դասի մէջտեղ, գրքակալի մօտ, խօսում էր.

—Օրհնեալ ժողովուրդ, Աստուած մի նոր պատուհաս ուղարկեց մեր գլխին. ում մտքից կանցնէր, որ քրիստոնեայ տէրութեան մէջ, քրիստոնեայ թագաւորի օրով, անօրէն Թուրքը, մահմեդականը յանդգնի սուր բարձրացնել հայ-քրիստոնեայի վրա, համարձակվի քանդել, այրել քրիստոնէական եկեղեցին: Մեր պապերը և հայրերը, որոնք գնացին քրիստոնեայ ռուսի փէշից կպան, ճանապարհ ցոյց տուին նրան, առաջնորդեցին և օգնեցին նրան խլել այս երկիրը Թուրքի ձեռքից, ամենևին չէին հաւատայ այն աշխարհում, եթէ մէկը նրանց տանի այն լուրը, թէ այժմ Թուրքը ռուսի աչքի առաջ կողոպտում, աւերում, հրկիզում է հայ գիւղերը: Բայց մենք, նրանց սերունդը, այդ օրն էլ տեսանք: Եւ ինչ ենք արել այդ Թուրքերին, ինչ վատութիւն ենք գործել: Նրանք ամբողջ ժամանակ վնասներ էին հասցնում մեզ, գողանում էին մեր տաւարը, մեր ապրանքը, բայց մենք համբերում էինք. Աստուած մեզ մէկին տասն էր տալիս մեր թափած քրտինքի, աշխատութեան համար. նրանք միշտ դիմում էին մեր օգնութեան, սովի, նեղութեան ժամանակ. մեր տները, մեր ամբարները բանում էինք նրանց առաջ, նեղ նրանց գործ, աշխատանք էինք տալիս: Բայց ճշմարիտ որ պապական խօսքը, ժողովրդի ասածը գանձ է. ախր չէ որ ասած է «Թուրքին հաւատալ չի կարելի, նա օձի պէս կը կծի քեզ, հէնց որ տաքացնես նրան կրծքիդ վրա»: Հիմա մենք մեր աչքով տեսանք այդ: Մեր հարևան Թուրք գիւղերը, որոնց այնքան լաւութիւններ ենք արել, եկել շրջապատել են, որ մեր գիւղը առնեն, մեզ կոտորեն, մեր ունեցած-չունեցածը թալանեն տանեն: Հինգ օր է մենք շրջապատված ենք. ճիշտ է, նրանք դեռ չեն համարձակվում դաշտից մտնել հովիտը և նրանց համար շատ դժուար կը լինի ձորից բարձրանալ գիւղը, բայց եթէ մեծ թւով գրոհ տան, կարող են բարձրանալ, տալով բաւական զոհեր: Մենք էլ ընդամենը ունենք 30—40 կուռ տղերք, բայց չէ որ մեր պաշարը, գնդակի, փամփուշտի պաշարը կարող է հատնել, այն ժամանակ մենք կորած ենք, որովհետև փախչելու ուրիշ ելք և տեղ չունենք:

—Ճիշտ է, ճիշտ, տէր-հայր, ասացին միաբերան ծերունիները:

—Ի՞նչ պէտք է անենք:

—Ի՞նչ պէտք է անենք, գրեթէ գոռաց տէր Բարսեղը. շատ պարզ է, պէտք է մի կերպ լուր հասցնենք քաղաք, որ մեզ օգնութիւն ուղարկեն, զինւոր ուղարկեն այդ անօրէններին քշելու համար:

—Փառաւորվիս, տէր հայր, բայց ո՞վ կը գնայ քաղաք, ո՞վ լուր կը տանէ:

Տիրեց ընդհանուր լռութիւն:

—Տղերք ասաց տէր Բարսեղը, դիմելով եկեղեցու դասն առաջ խռնված մի քանի զինւորված երիտասարդների. ո՞վ ձեզանից տղամարդութիւն կանի, ո՞վ ձեզանից կը կամենայ ազատել իր հայրենիքը, մեր գիւղը և կը գնայ քաղաք մեզ օգնութիւն բերելու:

—Ես, լսվեց խորին լռութեան մէջ մի ձայն, որից տէր Բարսեղի ծնկները կքվեցին, շունչը բերանումն մնաց և մօտ եղաւ որ ընկնի:

Նա լսեց իր որդի Յակոբի ձայնը:

—Դու, ասաց նա, նուաղած ձայնով և խորին կսկիծով. դու, որդեակ, չես կարող. դու զաւակներ ունես, ծերունի հայր և մայր. թող գնայ ամուրի երիտասարդներից մէկը:

Եւ աղերսալից նայուածքը սևեռեց որդու վրա:

—Ոչ, հայր, պատասխանեց Յակոբը, դա ամեն մարդի գործ չէ. այստեղ ճարպիկութիւն պէտք է. ես այդ պաշտօնը յօժարութեամբ կատարեմ, իսկ իմ զաւակներս, քեզ և մօրս Աստուած կը պահպանէ: Ես հէնց այս գիշեր ճանապարհ կընկնեմ:

Տեսնելով որդու վճռականութիւնը, տէր Բարսեղը, բարկացած, գոչեց.

—Եթէ այդպէս է, ես ինքս կը գնամ, եթէ չը կայ մի այլ կտրիճ երիտասարդ, որ գնայ. իսկ դու մնայ պաշտպանելու մօրդ, ընտանիքդ և քրոջդ:

—Դու չես գնայ, տէր-հայր, այլ ես կը գնամ, լսվեց յանկարծ մի նոր ձայն և եկեղեցու շեմքի վրա երևաց Արամի գեղեցիկ դէմքը, հրացանը ձեռքին բռնած: Բայց իմ գնալը կախված է քեզանից:

Ինձանի՞ց, հարցրեց անվստահաբար տէր Բարսեղը:

—Այո, տէր-հայր, քեզանից:

Եւ մօտենալով նրան, Արամը չոքեց նրա առաջ: Տէր Բարսեղը նոյնպէս չոքեց: Արամը ինչ որ փսփսաց նրա ականջին և երբ տէր Բարսեղը ձեռքը դնելով նրա գլխին, ասաց բարձրաձայն. «Խոստանում եմ սուրբ սեղանի առաջ կատարել խնդիրքդ», նա վերկացաւ, ուրախ-ուրախ, ժպտուն, դիմեց դէպի դուռը, և հրացանը վերցնելով, շտապեց իր պահակատեղը:

Յակոբը հետևեց նրան:

Շահրիար

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

—

Դեկտեմբերի 11-ից լոյս 12-ի գիշերը դրագունները շրջապատեցին Վալօվայա փողոցի վրա գտնվող մեծ տունը, որի մէջ գտնվում է Սիտինի և ընկ. տիպօ-վիմագրատունը, ուր իբր թէ բուն էր դրել պատերազմող դրուժինան և որտեղից իբր թէ մի քանի անգամ հրաձգութիւն էր եղած: Իսկ տան մէջ ապրողների խօսքով, ոչ մէկ դրուժինա այնտեղ չէ եղել, և յիշեալ դրուժինայի ոչ մէկ անդամ այնտեղ բռնված չէ եղել: Շուտով տան մէջ հրդեհ սկսվեց, որը շարունակվեց ամբողջ գիշերը և որի պատճառը տան մէջ բնակվողները վերագրում են դրագուններին: Ահագին բազմայարկ տունը ամբողջապէս այրվեց, և վիմագրական ահագին գոյքը փչացաւ: Ստորին յարկը թանկագին ռօտացիօն մեքենաներով անվնաս մնաց, բայց բոլոր վերին յարկերը փլվեցին, և ահագին ծանրութիւնը սպառնում է պատռել և ներքին յարկի առաստաղը: Վնասը մի միլիոնից աւելի է:

Դեկտեմբերի 12-ին զօրքերի գործողութիւնները գլխաւորապէս կենտրոնացած էին Պրեսնենսկի շրջանում, որի համարեա բոլոր փողոցները և պերեուլկաները ծածկված էին բարրիկադներով և մետաղաթելային խափանիչներով: Արտիլերիական հրաձգութիւնը տեղի ունէր Տրեօխգօրնայա զաստաւայի ետևը, ուր զօրքերը պաշարում էին Պրօխօրօվեան մանուֆակտուրան: Գործարանային մարտնչող դրուժինայի կողմից, որը բուն էր դրել բնակարանների մէջ և գործարանի թաղօնում, որպէս հաղորդում են, զօրքերը զօրեղ դիմադրութեան հանդիպեցին: Թէ մէկ և թէ միւս կողմից շատ կային սպանվածներ և վիրաւորներ: Պաշարումը վերջացաւ սպառողական խանութի հրդեհով, որը հրդեհվել էր այնտեղ ընկնող արտիլերիական ռումբերից: Գործարանի գլխաւոր բնակարանները առանձնացած էին մնացել: Շրջանի այլ մասերում, Գորբատի կամուրջի մօտ և Մոսկվա-գետի ափին տեղի ունէին կռիւներ պատրուլների և դրուժինայի անդամների միջև, որի ժամանակ կային սպանվածներ և վիրաւորներ երկու կողմից և: Տեղի ունէր արտիլերիական հրաձգութիւն նոյնպէս Սմօլէնսկայա հրապարակի վրա: Սադօվայա փողոցով անց ու դարձ էին անում դրագունների զօրաբաժիններ առանց օֆիցերների, թնդանօթներով կրակ էին թափում մարդկանց խմբակների վրա և աւերում էին բարրիկադները: Գնդաձգութեան ենթարկվեց նոյնպէս Խօլչևնի տունը, Տվէրսկօյ բուլվարի վրա, Սիտինսկի փողոցի անկիւնում, ուր ստորին յարկում զետեղված են «Вечерная Почта» լրագրի ապարանը, իսկ վերին յարկում կահաւորված սենեակներ: Այդ տնից իբր թէ հրաձգութիւններ էին եղել զօրքի և ոստիկանութեան վրա, այդ պատճառով վճռված էր ռմբակոծման ենթարկել նրան: Սակայն, լուրերի համեմատ, տանտիրոջը աջողվել էր աղերսել հրամանատար օֆիցերին, որ խնայէ տունը, և հրացանաձգութեան ենթարկվեց միայն ստորին յարկը: Երեկոյեան նորից զանազան տեղերում այրվում էին բարրիկադները, որ քանդում էին հրդեհաշէջները: Մալայա-Նիկիտսկայա փողոցի վրա, Մեծ Համբարձման եկեղեցու մօտ, մէկ մարդ ռումբ գցեց, որը մեծ պայթիւն առաջացրեց, որից սակայն ոչ ոք չը վնասվեց, այլ ջարդվեցին միայն եկեղեցու պատուհանների ապակիները:

Դեկտեմբերի 12-ին Կալանչևսկայա հրապարակի վրա տեղի ունեցաւ կազակների կռիւը անյայտ անձանց խմբի հետ: Լուրերի համեմատ, ցերեկվայ 12-դ ժամվայ սկզբում Նիկոլաևսկայա կայարանի աշտարակից տեղի ունեցան մի քանի անգամ հրացանաձգութիւններ, որոնց պատասխանեցին անյայտ անձինք հակառակ կողմից, Մոսկվա-Կազանեան երկաթուղու կայարանի մարդատար գնացքին ցանկապատից, որի ժամանակ մի կօզակ սպանվեց աշտարակում: Այն ժամանակ կաբոլորը (ոչ սօցիալ-դեմոկրատները), որոնք առանձին հետաքրքրութեամբ (համա-կամ հակակրական մղումներից դրդված) հետևում են Ռուսաստանի և մասնաւորապէս Կովկասի սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւնների տակտիկական քայլերին, սկզբունքային որոշումներին և գրաւոր թէ բանաւոր արտայայտում նրանց մասին, շատ, գրեթէ ամեն անգամ հիմնվում են այս կամ այն երկրորդական անհատի ասածների—թող ներվի մեզ ասել՝ նոյն իսկ փողոցային ասեկօսէների վրա, —և այդ բոլորից եզրակացնում, թէ ով է սօցիալ-դեմօկրատիան՝ իբր մի ինքնուրոյն կուսակցական-քաղաքական մարմին, ինչ ծրագիր ունի նա և ինչ սկզբունքային դիրք է բռնում դէպի մեր իրականութեան այս կամ այն երևոյթը, դէպի մեր հասարակական կեանքի այս ու այն խոշոր, ծանրակշիռ խնդիրը: Ամն անհատի մի թիւրիմաց, անտեղի ու սխալ քայլը մեր հակառակորդի աչքում ամբողջ կուսակցութիւնը վարկաբեկ անելու ույժ ու նշանակութիւն է ստանում:

Դա, ասում և պնդում ենք, հասկացողութեան ու քննադատութեան մի անբարեխիղճ և ապարդիւն մեթօդ է, որից մեր յարգելի հակառակորդները պէտք է խուսափեն:

Քանի՜-քանի՜ անգամ ենք լսել, անմիջապէս թէ միջնորդաբար, թէ ինչպէս Դաշնակցութեան ագիտատորները, առաջնակարգ ույժերը, հրապարակով հազար ու մի այլանդակութիւններ են վերագրում մեզ և շահագործելով այդ հանգամանքը դուրս բերում, որ բոլորովին այլպէս են մտածում ու դատում եւրօպական մեր հեղինակաւոր ընկերները՝ Բեբել, Ժօրէս, Կաուցկի և այլն: Երևակայեցէք, մեր հայ օրաթերթերից մէկի խմբագիրը, որ իր նորածնունդ օրգանի ուղղութիւնը պարզելու համար պէտք է արտայայտվէր մի քանի սկզբունքային կարևոր խնդիրների վերաբերմամբ, գրում է «Ազգութեան խնդիրը» վերնագրով մի առաջնորդող յօդուած և կարդում խմբագրական ժողովում՝ բոլորի ներկայութեամբ: Ինչպիսի՜ այլանդակ մտքեր: Պ. խմբագրի կարծիքով, «ինչպէս որ բռնակալ պետութիւնները աշխատում են կլանել հպատակ մանր ազգութիւններին և ձուլել տիրապետող ժողովրդի հետ, այնպէս էլ սօցիալիստ-կօսմօպօլիտները (?) ժխտելով առանձին ազգերի գոյութեան գաղափարը, յայտարարում են նրանց ոչնչացումը, ի մի ձուլումը»: Եւ այդ «մարգարիտները» պիտի կարդար հասարակութիւնը թերթի էջերում, եթէ խմբագրութեան անդամներ չը լինէին: Նրանց հերքումներին պ. խմբագիրը առարկում էր՝ «միթէ X-ը կամ Y-ը չեն ասել այս բաները», մատնացոյց անելով ինչ-ինչ կիսակիրթ մարդկանց վրա կուսակցութեան մէջ: Պ. խմբագրի ամբողջ սօցիալիստական հասկացողութիւնը՝ այն էլ հրապարակ հանելու, թերթին ուղղութիւն տալու հասկացողութիւնը, ինչպէս տեսնում ենք, հիմնված է եղել փողոցային ասեկօսէների վրա:

Սօցիալ-դեմօկրատական որ և է կազմակերպութեան դէմ խօսողները, մանաւանդ նրանք, որոնք յանուն սօցիալիզմի են խօսում, թող ամենից առաջ շատ լաւ ըմբռնեն սօցիալ-դեմօկրատներիս աշխարհահայեացքի — գիտնական սօցիալիզմի—էութիւնը և դրա վրա հիմնված այն ծրագիրը, որ ուղեցոյց է ծառայում այս կամ այն երկրի, իրականութեան սօցիալ-դեմօկրատական կազմակերպութեան, կուսակցութեան համար իր գործերի մէջ:

III

Պ. Լէօն, մէկը մեր ամենայարգուած ու համակրելի գրողներից, «քաղաքացի պ. Նազարբեկեանի թերթը» բերան համարելով սօց.-դեմ. բան. հայ կազմակերպութեան, թիւրիմացութիւնների մէջ է ընկնում, երբ նա այս կամ այն յօդուածագրի ասածների համար պատասխանատու է համարում ամբողջ կազմակերպութիւնը և յանդիմանքներ բարդում վերջինիս վրա: Յօդուածագիրը համարում է հայ սօցիալ-դեմօկրատիայի գոյութեան գաղափարը մեր մէջ, անհրաժեշտ է համարում նրա լինելը, միայն պահանջում է, որ սօցիալ-դեմօկրատներս լաւ ճանաչենք մեր կեանքը, ուսումնասիրենք մեր իրականութեան բնորոշ կողմերն ու երևոյթները, հեռու լինենք շաբլօնիզմից և այլն:

Պահանջը ըստ ինքեան խելացի է, ո՞վ կարող է դրա դէմ առարկել:

Սակայն պ. Լէօն պիտի լաւ իմանայ, որ տարբեր սկզբունքներով և մտածողութեան տարբեր մեթօդներով հասարակական կեանքն ու երևոյթները դիտող, ուսումնասիրող և քննադատող անհատները անհրաժեշտօրէն պիտի յանգեն տարբեր եզրակացութիւնների: Այն, ինչ սխալ ու երկրորդական է վերացական ու իդէալիստ մտածողի համար, ուղիղ ու էական է ռէալիստ ու մատերիալիստ մտածողի համար. և այդ հէնց այն հասարակ պատճառով, որովհետև իդէալիզմ ու մատերիալիզմ աշխարհահայեացքները հիմնապէս հակադիր են միմեանց: Որքան էլ խոր ու փաստալից լինի մեր բովանդակ իրականութեան—նրա պատմական անցեալի ու ներկայի, հասարակական բոլոր խոշոր ֆակտօրների—ուսումնասիրութիւնը, այնուամենայնիւ դա հաւասարապէս և նոյն արժէքով չի կարող բաւարարութիւն տալ երկու հակառակորդ բանակներին—իդէալիստներին ու մատերիալիստներին միաժամանակ: Մեր բուրժուական իդէալիստ իդէօլօգները եթէ նրանք հետևողական ու անյողդողդ են իրանց մտածողութեան ու դիտողութիւնների մէջ, երբեք չեն կարող գոհ լինել նրանով և անվերապահ ընդունել այն, ինչ մտածում, դատում և ուսումնասիրում են մարքսիստական (մատերիալիստ) իդէօլօգները, և ընդհակառակը:

Սա տարրական փաստ է, փաստ իր միջազգային նշանակութեամբ, որ այնքան ակներև դիտել կարելի է եւրօպական պատմաբանների, սօցիօլօգների և սօցիալ-փիլիսոփաների տարբեր բանակների մէջ:

Մենք սրանով չենք ասում, ի հարկէ, որ «Баку» թերթի մէջ շօշափված խնդիրները հիմնական ուսումնասիրութիւններ են մարքսիստական տեսակէտից, հետևապէս արժէք չունի պ. Լէօի պահանջը: Ամենևին ոչ: Այս ընդհանուր նկատողութեամբ ուզում ենք միայն մատնանիշ անել այն հանգամանքի վրա, —երբև պատասխան պ. Լէօի՝ սօցիալ-դեմօկրատներից արած ընդհանուր պահանջի,—որ ինչպիսի խորութեամբ և հիմնաւորութեամբ էլ ուսումնասիրված լինի այս կամ այն պատմական երևոյթն ու հասարակական ֆակտօրը որ և է մարքսիստի կողմից, նա, այնուամենայնիւ, չի կարող երբեք գոհացնել տալ իդէալիստ իդէօլօգի մտքին ու հարցասիրութիւններին, և իրաւ, ոչ աւելի այն պատճառով, որ թերի է ուսումնասիրութիւնը, զուրկ համոզեցուցիչ փաստերից, այլ որ նիւթի հետազօտութեան ու հարցերի քննադատութեան մեթօդն ու տեսակէտը, առաջնորդող տենդենցը բոլորովին տարբեր են, ոչ-իդէալիստական են:

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ, անցնենք յաջորդաբար այն սկզբունքային խնդիրներին, որոնց նկատմամբ պ. Լէօն յիշատակում է հայ սօցիալ-դեմօկրատի դիրքն ու վերաբերմունքը (որ նա սխալմամբ վերագրում է նաև ամբողջ հայ սօցիալ-դեմօկրատիային):

Բ. Իշխանեան

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 2 յունվարի

«Մշակի»-ի № 247-ում պ. Ս. յայտարարում է, որ Թիֆլիսի Դրամատիկական ընկերութիւնը տուել է դերասաններին երկու ամսվայ ռոճիկ և արձակել:

Դա մի մեծ սխալ է:

Հայ դերասանական խումբը ստացել է միայն մի ամսվայ ռոճիկ—այն էլ դուրս գալով այդ մի ամսվայ ռոճիկից այն ավանսները, որ պէտք էր դուրս գար ամիս ամիս մինչև փետրվարի—12-ը, օրինակ—եթէ մէկը ստանում է ռոճիկ 125 ր. և ունի ավանս 60 ր.—նա ստացել է 65 ր. մինչդեռ երկու ամսվայ ռոճիկը անում է 250 ր.—նա ընդամենը ստացել է 65 րուբլի: Ինչպէս տեսնում էք զանազանութիւնը շատ մեծ է:

Ճիշտ է, դերասանները վերջին հաշուի ժամանակ ստացել են մի քառորդ աւելի—բայց դա մեր իրաւունքն էր, որովհետև ամսի—15-ից մինչև 23-ը, այսինքն 8 օր, մենք ունեցել ենք ներկայացում 17-ին և 21-ի, նշանակած (և յետաձգված) և փորձեր մինչև 23 նոյեմբերի. ուստի մեզ պարտական էին տալու այդ վարձը:

Ես այս նամակով ոչ մի ենթադրութիւններ չեմ անում—այլ արձանագրում եմ իրողութիւնը, որ հասարակութիւնը սխալ կարծիք չը կազմէ մեր բիւջէի մասին—այսպիսի ծանր րոպէին:

Դերասան Գ. Պետրոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մշակի հետևեալ համարը լոյս կը տեսնէ յունվարի 8-ին կիրակի օր:

Դեկտեմբերի 22-ի աղետալի անցքը, որի ժամանակ ամբակոծվեց Սօլդատսկի բազարի (3-դ քաղաքամաս) Ներսիսեան դպրոցին պատկանող հին շինութիւնը, որի մէջ բազմաթիւ առևտրի զանազան խանութներ կային և որի ժամանակ բազմաթիւ անմեղ անձինք զոհ գնացին հրի և սրի մի չարագործի ձեռքով նետած ռումբի պատճառով—եղբ. Թամամշևների քարվանսարայի բոլոր բազմաթիւ վաճառականներին իրարանցման և երկիւղի մէջ է գցել: Երկիւղ կրելով, որ մի գուցէ մի որ և է չարագործ-խուլիգանի գիւական արարքից նոյն դէպքը կրկնվի այդ անգամ շինութեան մէջ, վաճառականները իրանց ապրանքների մեծ մասը կրեցին խանութներից աւելի ապահով տեղեր: Բացի այդ քաղաքիս բանուկ փողոցների վրա գտնվող հիւրանոցները և կահաւորված համարները, ինչպէս օր. 9-դ մասի իշխ. Վօրօնցովի արձանի շուրջը («Վենեցիա», «Ցենտրալնի», «Միխայլօվսկի» և այլն) փակված են հիւրերի համար ժամանակաւորապէս նոյն երկիւղից և դէպքերի կրկնվելու նախազգուշութիւնից: Տարակոյս չը կայ, որ քաղաքիս առևտուրը վտանգվելով երկարատև կրկնվող գործադուլներից և երերուն վիճակից՝ շատերի համար անապահովութեան դուռն է բացում մօտիկ ապագայում և շատերը ներկայ պայմաններում լաւ են համարում կարճել և վերջ տալ իրանց առևտրին:

Դեկտեմբերի արիւնոտ սարսափները քաղաքիս բնակիչներից շատերի վրա ահ գցելով—պատճառ են դարձել քաղաքիցս շատերին հեռանալու: Ոմանք ընտանիքները ուղարկելով գիւղերը և այլ ապահով տեղեր՝ իրանք մնացել են քաղաքումս, ոմանք էլ ընտանիքով հեռացել են: Առանձնապէս նկատելի է խմբովին և մեծ քանակութեամբ իմերէլների փախուստը քաղաքից. այդ երամային փախստի մի պատճառը մի կողմից բազմաթիւ ձերբակալութիւններն են, իսկ միւս կողմից—իրանց հայրենիքում բռնկված աւեկոծ վիճակը և պատ[illegible]կալի դէպքերը:

«Кавк.» պաշտօնական լրագրում կարդում ենք. «Անդրկովկասի երկաթուղիների Բաքուի, Կարսի և Երևանի գծերի վրա բոլոր ծառայողներն սկսեցին գործել: Արդէն այդ մասերում ուղարկվում են օրական մի զոյգ գնացքներ: Գծի պաշտպանութեան գործում զօրքերին օգնելն իր վրա առաւ շրջապատի թուրք ազգաբնակութիւնը»: Թուրքերին յանձնում են, ուրեմն՝ անդրկովկասեան գծերի պաշտպանութիւնը... Եւ այսուհետև էլ ո՞վ իրաւունք կունենայ բողոքելու աճող աւազակութիւնների դէմ:

Աղստաֆա կայարանում յունվարի 1-ին ձերբակալված է 47 հատ բերդանի հրացան, իսկ Գանձակ կայարանի պօստում բռնել են զէնքի և փամփուշտի մի մեծ ծրար:

Կովկասի փոխարքան և իր ամուսինը նուիրել են Թիֆլիսում հայ-թուրքական յարաբերութիւններից վնասված [illegible] 1,000 ր.: Նոյն նպատակի համար գեներալ Մալամայի զաւակները նուիրել են 15 ր., Թիֆլիսի վրաց հասարակութիւնը—71 ր. 50 կ., շտաբի պաշտօնեաները 53 ր. 70 կ. և այլն:

Յունվարի լոյս 3-ի գիշերը Նադեժդինսկի փող. Վասիլիյ Դրօզդովին՝ իր սեփական տանից կոտրելով գողացված են 300 րուբլու զանազան իրեր Նաւթլուղի բնակիչներ Դրօզդովի եղբայր Թեօդոր Դրօզդով, Մատվէեվ և Գրիգորիեվի ձեռքով, յանցաւորները դատի են ենթարկված:

Ոստիկանապետը յայտնում է, որ յունվարի 2-ին առաւօտեան Ցիցիանովսկի պօդեոմի վրա (7-րդ քաղաքամաս) պահակ զինուորները բռնեցին 2 չարագործի, 2 պատրաստի ռումբ ձեռքին:

Եկատերինօդարից հեռագրում են գեներալ Շիրինկինի դիւանին, որ կեանքն արդէն մտել է իր սովորական ուղին. երկաթուղային և պօստ-հեռագրական գործադուլը վերջացել է:

Յունվարի 2-ին ցերեկվայ ժամը 12-ի մօտ, Ցիցիանովսկի և Ալազանսկի փող. անկիւնում, այնտեղ գինեվաճառ Արշակ Սեմէնով Մայսուրովի գինու պահեստում մտել են 2 անյայտ չարագործներ և նրան ծանր վէրք հասցրել գլխին, փորին և ձախ ձեռքին: Մայսուրովը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը: Չարագործները անյայտացել են:

Մենք հաղորդել էինք, որ Փոխարքայի խորհրդի այն նիստերին, որ պէտք է քննվեն հայ-թուրքական յարաբերութիւնները, մասնակցելու են հայերի և թուրքերի կողմից ներկայացուցիչներ: Այժմ Թիֆլիսում ծխական ընտրութիւններ են կատարվում պատգամաւորներ նշանակելու, որոնք իրանց կողմից պէտք է ընտրեն Թիֆլիսի հայ ժողովրդի կողմից չորս անձ: Մենք հաղորդել էինք Մաղնու եկեղեցու ընտրվածներին: Այժմ կարող ենք աւելացնել, որ Կուկիոյ Նորաշէն Աստուածածնի եկեղեցում ընտրվել են Ա. Քալանթար, Ն. Գրիգորեան և Յ. Բաբանեկեան:

Շաքարի ճգնաժամը միայն քաղաքի բնակիչներին չէ գցել նեղ դրութեան մէջ՝ նրա հետևանքները զգալի են լիմօնադի գործարանների համար, որտեղ մի քանի հարիւր բանուոր կան և մնում են անգործ, բացի այդ նոյն վնասաբեր հետևանքը նշմարվում է և կօնդիտերների համար, որոնք նոյնպէս ընդհանուր առմամբ բաւական աշխատող ձեռքեր ունեն արհեստանոցներում. վերջիններս շաքարեղէն արտադրութեանց վրա գները 20% աւելացրել են՝ որպէս հետևանք շաքարի ճգնաժամի և շաքարի տեղ շաքարի փոշի (պուդր), մեղր և այլ քաղցրեցուցիչ նիւթերով «եօլլա» են տանում իրանց բանը:

Ինչպէս յայտնի, կառավարութիւնը նպաստներ է բաշխում սովահար եղող նահանգներին: «Молва»-ի (նախկին Русь-ը) ասելով՝ կառավարութիւնը այլևս տրամադրելի փող չունի սովի զոհերին յատկացնելու համար: Ներքին գործերի մինիստրը հրաման արձակեց ագրարական շարժման մասնակցող ոչ մի գիւղի նպաստ չյատկացնել: Մինչև այժմ բաժանել են մօտ 7 միլիօն րուբլի:

Անդրկովկասի գիւղական հասարակութիւններից շատերը խնդիր էին ներկայացրել պատշաճաւոր իշխանութեանը, որ խաղաղ ժամանակում կրճատվի իսկական ծառայութեան ժամանակը և, բացի դրանից, անդրկովկասցի նորակոչները թողնվեն իրանց երկրի սահմաններում, ինչպէս արվում էր մինչև 1899 թիւը: Խնդրատուները պատճառաբանում էին, որ իրանց զաւակների վրա շատ սպանիչ կերպով են ազդում ներքին նահանգների կլիմայական պայմանները: Երբ փոխարքային զեկուցվեց այդ խնդիրների մասին, նա յայտնեց որ կովկասցի նորակոչներին ուղարկում են Թուրքեստանի, Օդեսսայի, Կիեվի, Կազանի, Մօսկվայի, Վարշավայի զինուորական շրջանները, որոնց կլիմայական պայմանները շատ էլ տարբեր չեն Կովկասի պայմաններից: Բացի դրանից փոխարքան խոստացել է, որ զինուորական օրէնքների վերաքննութեան ժամանակ այդ խնդիրներն աչքի առաջ կունենան:

Նախագծվում են նոր հարկեր թղթի, վառօդի և ծխախոտի գիլզաների վրա:

Անցեալ օր Բաթումի պօստ-հեռագրական պաշտօնեաների կողմից մի պատգամաւորութիւն է եկել Թիֆլիս, որպէս զի իմանայ թէ ինչ վիճակում է պօստ-հեռագրական գործադուլը Թիֆլիսում, որովհետև ամեն տեսակ յարաբերութիւն կտրված էր Բաթումի և Թիֆլիսի, նոյն իսկ Բաթումի և Պետերբուրգի միջև: Այդ պատգամաւորութեան ուղևորութիւնը բաւական հետաքրքիր է: Նա դուրս է եկել Բաթումից դեկտեմբերի 27-ին զինուորական գնացքով և հասել է Կոբուլէթի կայարանը: Այդ տեղ արդէն գիծը և կայարանը փչացված լինելով, առաջ է շարժվել ոտով մինչև Նօթանէբի: Այդ տեղից նորից գնացք մտնելով, եկել է Մարէլիսի կայարանը, ապա կրկին ոտով մինչև Միխայլօվօ: Պատգամաւորները պատմում են որ, Սուրամի տօննէլը պաշտպանվում է զօրքերով: Տօննէլի մէջտեղը մի շօգեշարժ խորտակված է և նրա տակի ռէլսները հանված են: Միխայլօվից պատգամաւորները Թիֆլիս են եկել ֆուրգօնով:

Թիֆլիսի նահանգական դատարանի պրօկուրոր է նշանակված Բաքւի նահանգական դատարանի պրօկուրոր Վօրօնովը:

Թիֆլիսի հայ-թիւրքական խաղաղարար յանձնաժողովը իր տրամադրութեան տակ հաւաքված 5000 ր. գումարից 3000-ը յանձնել է Շէյխուլ-Իսլամին՝ պարսկական հիւպատոսի և երկու ընտրովի թուրքերի հետ միասին բաժանելու թուրք-հայկական ընդհարումներից վնասված մահմեդականներին, իսկ 2000-ը յանձնեց Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեանը:

Պաշտօնական «Кавк.» լրագիրը հաղորդում է, որ վրաց եկեղեցական-ծխական դպրոցները շուտով անցնելու են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ:

Ալէքսանդրօպօլի քաղաքային ինքնավարութեան ձայնաւորներից 29 հոգի խմբական մի գրութիւնով դիմել են Թիֆլիսի դումայի ձայնաւոր բժիշկ Ալ. Խատիսեանին և խնդրել նրա համաձայնութիւնը՝ դնելու նրա թեկնածութիւնը քաղաքագլխի պաշտօնի համար: Պ. Խատիսեանին առաջարկում են 3,000 ր. ռոճիկ: Ասում են, որ պ. Ալ. Խատիսեանը մտադիր չէ ընդունելու այդ պաշտօնը:

Առաջարկութիւն կայ ներկայ յունվարի 15-ից Թիֆլիսում հաստատել գիշերապահների խումբ, որոնց վրա դրվելու է նաև փողոցները մաքուր պահելու հոգսը: Դա նոյն դռնապանութիւնն է, առանց ոստիկանական զանազան պարտականութիւնների: Մի քանի տնատէրերը կարող են միանալ և վարձել մի գիշերապահ: Այդ գիշերապահների հերթապահութիւնը և նրանց կարգ ու կանոնը որոշելու է քաղաքային ուպրաւան:

Պետերբուրգից յունվարի 1-ին (ն. տ.) հեռագրում են «Matin» լրագրին. «Ձերբակալութիւնները աւելանում են Պետերբուրգում և գաւառներում: Մօսկվայում ձերբակալեցին Գուչկովին, որը քաղաքագլխի պաշտօն էր վարում: Հակառակ ճնշումներին և ձերբակալութիւններին, կայսրութեան ներքին նահանգները մատնված են միշտ խառնակութեան: Ռումբեր են գցել Օդեսսայում, Վարշավայում, Կիևում: Լուր ստացվեց, որ անդրսիբիրեան երկաթուղին գործադուլ է արել: Բալտիկեան նահանգներում, գեներալ Օրլովի թռուցիկ զօրամասը դանդաղութեամբ է առաջնում, հակառակ գեներալի «էներգիային»: Այս զօրամասը երկաթուղու կայարաններից մէկը հասած լինելով գեներալ Օրլով պահանջեց, որ իր մօտ գան տեղական իշխանութիւնները: Նրա մօտ եկան քաղաքագլուխը և նրա օգնականը, ինչպէս և կայարանապետը: Գեներալը նրանցից պահանջեց, յանուն կայսրի, իսկոյն մի գնացք պատրաստել իր համար: Իշխանութիւնները պատասխանեցին, որ կայսրին չեն ճանաչում: Այդ պատասխանից երեք րօպէ յետոյ, քաղաքագլուխը և նրա օգնականը և կայարանապետը կախված էին, և կէս ժամ յետոյ գեներալ Օրլով իր տրամադրութեան տակ ունէր իր գնացքը:

Մօսկվայի արիւնահեղ դէպքերի մասին խօսելով՝ «Times»-ը արձանագրում է հետևեալ վայրագ փաստը. «Զինուորները երէկ, դեկտ. 19-ին, մտնելով մի բժշկի մօտ, որը կազմակերպել էր մի ամբուլանս (հիւանդանոց), սպա-

---

գակների մի խումբ, դուրս գալով հրապարակը, սկսեց հրացանաձգութիւն Կազանեան երկաթուղու ցանկապատի վրա, իսկ դուրս բերված թնդանօթները սկսեցին ռումբեր արձակել այնտեղ: Մի քանի ռումբեր դիպան ցանկապատի մօտ գտնվող փակված մի յարկանի փայտեայ շինութեանը, որի մէջ գտնվում էր Կազանեան երկաթուղու ծառայողների սպառողական խանութը: Եկած հրդեհաշէջ խմբին չը թոյլ տուին հանգցնել հրդեհը: Դրանից յետոյ արտիլերեան մի քանի ռումբեր արձակեց հրապարակից Դօմնիկօվսկայա փողոցի կողմը, ուր մնացին մի քանի վիրաւորներ, և Սօկօլնիկի կողմը, ուր նոյնպէս մնացին մի քանի մարդիկ: Ապա արտիլերիան և հետևակ զօրքը սկսեցին ամբակոծել Կազանեան երկաթուղու ցանկապատին հարևան Կոնօնովի, Մօվէնկօի և Տասօմների տները, որտեղից իբր թէ կրակել էին զօրքի վրա: Այդ տները համարեա թէ բոլորը առանց բնակիչների էին մնացել, որովհետև շտապել էին առաջուց դուրս գալ այդ տեղերից: Նրանք նշանաւոր կերպով վնասված են: Հրաձգութիւնը հրապարակի վրա շարունակվում էր մինչև երեկոյեան 5 ժամը: Մութը կոխելուն պէս ամբողջ հրապարակը Նիկօլաևսկի վօկզալի առջև լուսաւորվում էր էլէկտրական ցոլացուցիչով: Սպառողական խանութը դեռ երկար այրվում էր գիշերը, բացի դրանից կրակի ճարակ դարձան 12 վագօններ, որոնք կանգնած էին պահեստի ճանապարհների վրա, խանութի մօտ նրա համար պաշարեղէնով: Այդպիսի մեծ քանակութեամբ պաշարեղէնի ոչնչացումը շատ ծանր հետևանք ունեցաւ Մօսկվա-Կազանեան երկաթուղու ծառայողների և բանուորների համար, որոնցից շատերը համարեա զրկված են իրանց համար անհրաժեշտ մթերքներ ստանալու որ և է հնարաւորութիւնից:

Դեկտեմբերի 13-ին մի քանի շրջաններում պատերին կպցրվեցին յայտարարութիւններ ապստամբութեան կազմակերպողների կողմից, որոնց մէջ ցոյց էին տալիս, թէ ինչպէս պէտք է վարել կռիւը, մի և նոյն ժամանակ խորհուրդ էր տրվում բարրիկադները չը պաշտպանել, այլ գրաւել հարևան տները և բակերը և այն տեղերից կրակ թափել զօրքերի վրա, կոտորել և զինաթափ անել մանաւանդ օֆիցերներին, ոստիկանութեան պաշտօնեաներին, դրագունններին և կօզակներին: Ոստիկանութեան բաժինների և ոստիկանութեան հատ հատ պաշտօնեաների վրա յարձակումներն յիրաւի շատացան վերջին օրերը. այդ ժամանակվայ ընթացքում ոստիկանութեան պաշտօնեաներ, լուրերի համեմատ, վիրաւորվեցին ընդամենը մինչև 50 մարդ, որոնցից մօտ 15 հոգի սպանված են: Օֆիցերներից, որպէս այդ լինում էր և առաջ, խլում էին զէնքը. օֆիցերները համազգեստով համարեա դադարեցին երևալ փողոցներում այդ օրերը, նոյնպէս և գօրօդօվոյները հանդիպում էին կամ շորերը փոխած կամ մի քանիսը միասին, այն էլ հրացաններով զինուորված: Իրանց կողմից ոստիկաններ, ժանդարմները և դրագունները յաճախ խիստ դատաստան էին անում իրանց աչքին կասկածելի երևացած անձանց վերաբերմամբ: Օրինակ, դեկտեմբերի 13-ին Կարետնի-Ռեադ փողոցում մի սանիտար կառքով տանում մի անծանօթ վիրաւորվածի դէպի Նօվօ-Եկատերինսկայա հիւանդանոցը: Պետրովկից դէպի հիւանդանոցը շուռ գալու ժամանակ կառապանին կանգնացրին մի ժանդարմ, մի զինուոր և քաղաքացիական հագուստ ունեցող մի անծանօթ մարդ, որոնք սկսեցին խուզարկել թէ սանիտարին և թէ վիրաւորին: Սանիտարի վերարկուի տակ տեսան ուսանողական տուժուրկա, այդ բանն արդէն բաւական էր ուսանողին հրացանազարկ անելու համար: Վիրաւորին կառապանը հասցրեց մինչև հիւանդանոց, իսկ սպանվածի ետևից հիւանդանոցից ուղարկվեցին սանիտարներ: Սպանվածի հագուստի գրպանները շուռ էին տուել, տուժուրկայի մէջ գտան մի թաշկինակ «Н. Д.» նշանատառերով:

Այդ օրը Մալի Ուսպէնսկի փողոցի կողմից ամբակոծութեան ենթարկվեց Շիկի եռայարկ տունը, որը երեսակողմով դուրս է գալիս դէպի Կարետնի-Ռեադ, իսկ կողքերով-դէպի Սպասկի փողոցը, ուր գտնվում է 1-ին [illegible] դպրոցը: Ռումբերից 9 ճեղքվածքներ գոյացան տան մէջ: Հրաձգութեան ժամանակ այդ տան մէջ Գավրիլովայի ճերմակեղէն պատրաստելու արհեստանոցի կառավարիչ Կարիտին և մի քանի աղջիկ-աշակերտուհիներ ուզեցին փախչել հանդիպակաց մուտքից, որը տանում է դէպի Սպասկի փողոցը: Հէնց որ նրանք երևացին, ահա սրանց վրա հրաձգութիւն սկսվեց հրացաններից և րէվօլվերներից: Գնդակն անցաւ Կարիտինի ուսից, երեք աղջիկներ վիրաւորվեցին, մնացածները կարողացին յետ վազել տուն: Արտիլերիայով գնդակահարվեցին և շատ ուրիշ տներ քաղաքի զանազան մասերում. Օրինակ Կորովինի տունը, Տվէրսկայա փողոցի վրա, Բուրգանովսկու տունը, Սադօվայա և Վլադիմիրօ-Դօլգօրուկովսկայա փողոցների անկիւնում, որից դրուժինայի զինուորները կրակ էին թափում անցնող զօրքերի վրա և որի մէջ ռումբերից փչացվեց տան տիրոջ դեղատունը. Պլատունովների տունը, Սադօվայի վրա, Չիժիկօվի անկիւնային տունը, որի վերին յարկում գտնվում են «Եալտա» կահաւորված սենեակները և ուրիշները: Տների բնակիչներին մեծ մասամբ, նախապէս իմաց էր տրվում ամբակոծութեան մասին, և նրանց հնարաւորութիւն էր տրվում մաքրել կամ, աւելի ճիշտ, թողնել իրանց բնակարանները: Պրէսնի վրա ջարդվեցին գնդակներով մինչև 12 տներ. ամբակոծվեցին նոյնպէս Պրօխօրօվսկայի մանուֆակտուրայի կազարմաները և Շմիտի կահկարասիների գործարանը: Կային տներ, ուր զոհեր չէկային, կային և այնպիսի տներ (նրանց մօտ եղած փողոցներում) որոնց մէջ տասնեակ վիրաւորվածներ էին գտնված թէ դրուժինայի անդամներից, թէ գլխաւորապէս պատահմամբ անցնողներից: Այդ օրը Ռօգօժսկայա զաստավայի մօտ տեղի ունեցաւ ոստիկանութեան ընդհարումը գործադուլ անողների ամբոխի հետ: Վիրաւորվեցին օկոլոդոչնի վերակացու Նազօրով և երկու գօրօդօվոյ. գործադուլ անողների կողմից սպանվեցին երկուսը: Գիշերը յարձակում գործվեց Ռօգօժեան մասի 2-դ բաժնի վարչութեան վրա, որի ժամանակ սպանվեցին Տուրկեստանից եկած Մուխել անունով մէկը և համալսարանի ուսանող Կալաշնիկով: Հէնց այդ յարձակման ենթարկվեցին Պրէսնենսկիի մասի 1-ին և 3-դ ոստիկանական բաժինները, իսկ Պրօխօրօվեան գործարանի մօտ հրացանազարկ արվեց ապստամբների կողմից մահվան պատժի դատապարտված օկոլոդոչնի վերակացու Սախարով և սպանվեցին երկու գօրօդօվոյներ: Դեկտեմբերի 14-ից, առաւօտից և մինչև ցերեկվայ $2^1/_2$ ժամը արտիլերիայով ամբակոծվում էին Լէսնայա փողոցը, ուր ռումբերով աւերվեցին ձիա-երկաթուղային վագօններից շինած բարրիկադները, Միլլերի պարկը, ձիերի բակը (ուր սպանվեցին մի քանի ձիեր) և Գրոմովի փայտեայ տները, Պիկսովի փողոցի անկիւնում: Այդ տանտիրոջ եռայարկ տունը, որի մէջ բնակվում են մանր [illegible], հրդեհվեց հրաձգութիւններից և հիմնովին այրվեց, որի ժամանակ շատ մարդ սպանվեց: Ի միջի այլոց տան մէջ ներս թռած ռումբով սպանվեցին 9 հոգի դերձակներ, որոնք աշխատում էին իրանց դազգահի շուրջը: Շատ ուրիշները սպանվում էին գնդակներից, երբ դուրս էին վազում փողոցը: Կրակ ընկաւ նոյնպէս Պետրովի տունը, և բաւականաչափ վնասվեց ռումբերից ազնուականութեան պանսիոն—ապաստանի տունը: Այդ օրը տեղի ունեցաւ զինված յարձակում Սուշչևսկի մասի 1-ին բաժնի վարչութեան վրա, որի ժամանակ ծանր կերպով վիրաւորվեց օկոլոդոչնի Լատիշև և սպանվեց մին գօրօդօվոյ: Այդ թիւ առաւօտեան Միուսկայա հրապարակի վրա, Արդիւնաբերական ուսումնարանի տան մէջ, ուր գտնվում էր դրուժինիկների վիրակապային կէտը, ձերբակալվեցին մի քանի տասնեակ անձինք, տղամարդիկ և կանայք, որոնց մօտ գտնվեցին րէվօլվերներ: Հէնց այդ օրը, մօտ 4 ժամին, արտիլերիայով մի քանի ամբաձգութիւն եղաւ Րօմանովի տան վրա, Բրօննայա փողոցի և Տվերսկայա բուլվարի անկիւնում, որտեղից առաջուց կրակում էին բուլվարում կանգնած պատրուլի վրա: Հրաձգութիւնից 2—3 ճեղքեր գոյացան 3-դ յարկի պատուհանների միջև: Զօրքերի վրա կրակում էին բարրիկադների ետևից Բրօննայա և Նիկիտսկիե Վօրօտա փողոցներից: Նոյն օրը ամբակոծվեցին Աֆրէմովի տունը, Դօլգօրուկօվսկայա փողոցի վրա (սպանվեց քաղաքային ձիա-երկաթուղային ճանապարհների կօնդուկտօրը և մահացու կերպով վիրաւորվեց նրա որդին), Լուկօշկինի տունը (ռումբով ծակվեց պատը և անկողնում սպանվեց ծծկեր երեխան), Պօկրօվ Աստուածածնի եկեղեցին, Կուդրինում, նոյն տեղը Կուպչինսկայի տունը և Կենդանաբանական այգու Ակվարիումի շինութիւնը (ուր ոչնչացաւ ակվարիումը ձկներով) և այլն: Հրաձգութեան ժամանակ այստեղ սպանվեցին և վիրաւորվեցին մի քանի դրուժիննիկներ և պատահմամբ այնտեղ գտնվող անձինք: Պրէսնեսկի շրջանում այդ օրը սպանվեց, որպէս ասում են, յեղափոխական կոմիտէտի դատավճռով գաղտնի ոստիկանութեան պետ Վօյլօշնիկով: Նրա բնակարանը ներս խուժեցին մի քանի զինված մարդիկ, որոնք ստիպեցին նրան հրաժեշտ տալ կնոջը և երեխաներին, դուրս բերեցին նրան փողոցը և հրացանազարկ արին: Փորձեր եղան նոյնպէս նոյնպիսի դատավճիռներ ի կատար ածել գաղտնի ոստիկանութեան ուրիշ մի քանի գործակալների վերաբերմամբ, բայց զանազան աջող դիպուածների շնորհիւ նրանց աջողվեց ազատվել:

Դեկտեմբերի 15-ին յարձակումներ գործեցին Պրէսնենսկայա և Սուշչևսկայա մասերի շինութիւնների վրա: Պրէսնենսկայա մասի վրա յարձակումն յետ մղեցին հետևակ զօրքը, հեծելազօրքը և արտիլերիան, որի ժամանակ երկու կողմերից շատ սպանվածներ և վիրաւորներ կային: Սուշչևսկայա մասի վրա եղած յարձակումը, որ կատարեց ահագին ամբոխը, նոյնպէս յետ մղվեց թնդանօթաձգութեամբ և հրացանաձգութեամբ: Այդ օրը արտիլերիան ամբակոծեց և ուրիշ մի քանի տներ:

Այդ թիւ գիշերը շատ ձերբակալութիւններ եղան: Առաւօտեան 3-դ ժամին, Ֆօմաշևսկի տան մէջ, Տվէրսկայա և Գազէտնայա փողոցների անկիւնում, սիրուն կահաւորված բնակարաններից մէկում կալանաւորվեցին 10 անձինք, որպէս ասում են, սօցիալիստ-յեղափոխականների կոմիտէտի անդամներին: Բնակարանում խուզարկութեան ժամանակ գտնվել են իբր թէ դժոխային մեքենաներ, մի քանի պատրաստի ռումբեր և զանազան թղթեր, որոնցից երևում են նախապատրաստված փորձերը: Նոյն օրը առաւօտեան երկու լցված ռումբեր գտնվեցին Չերնօպեատովայի տան հանդիպաւոր մուտքի աստիճանների տակ, իսկ «Моск. Вѣд.» լրագրի խօսքով, նոյն օրվայ 3 ժամին, մանէժի մօտ գտնվել է ինչ որ տղամարդ, որի մօտ խուզարկութեան ժամանակ գտնվեցին երեք ռումբ: Այդ մարդը իբր թէ սպանվել է տեղնուտեղը. իսկ սպանվածի մօտ գտնվել է տոմսակ ուսանողական սեղանատան մէջ մուտք ունենալու համար, ուսանող Բօրիս Վինօգրադովի անունով: Նոյն լրագիրը հաղորդում է, որ նոյն թիւին, երեկոյեան 7 ժամին, Ալէքսանդրեան այգում սպանվեց բժիշկ Լանդի որդին, որը ձերբակալվելով կամենում էր, երբ թէ փախչել նրան ուղեկցող պահակախմբից, բայց հրացանազարկ եղաւ զինուորներից:

Այդ օրը յեղափոխական գործադիր կօմիտէտը վճռեց դադարեցնել բարրիկադների պաշտպանութիւնը, և հետևեալ օրն առաւօտեան մարդիկ ուղարկվեցին բարրիկադների հարևան տների դվօրնիկների մօտ առաջարկելով նրանց քանդել խափանիչները: Այդ առաջարկութիւնը ամեն տեղ ընդունվեց որպէս հրաման, և մի քանի ժամում բոլոր բարրիկադները քանդվեցին. տան տէրերը և դվօրնիկները տանում էին իրանց մօտ իրանց տներից վերցրած իրերը, իսկ մնացած իրերը տանում էին ուրիշ չքաւոր մարդիկ: Քաղաքի մեծ մասում կեանքն սկսեց իր բնական ընթացքը ստանալ, իսկ ապստամբութիւնը կենտրոնացաւ համարեա բացառապէս Պրէսնենսկի շրջանում և Պրէսնենսկի մասի շինութեան մօտ Այդ շինութեան հարևան և նրա հակադիր տները գրաւել էին դրուժիննիկները, որոնք կրակում էին Պրէսնենսկայա մասի բակում զետեղված զօրքերի վրա: Բերել տուեցին մի քանի թնդանօթներ և սկսվեց այդ տների ամբակոծութիւնը, որի ժամանակ բաւական զոհեր կային:

Այնու ամենայնիւ ապստամբութիւնը այդ շրջանում ճնշված չէր, և դեկտեմբերի 17-ի առաւօտից այստեղ սկսվեց խիստ արտիլերիական հրաձգութիւն: Դրան առիթ դարձաւ այն հանգամանքը, որ վաղ առաւօտեան, մօտ 6 ժամին Պրէսնենսկիի և Գօրբատիի կամուրջներով անցնող Սեմէնօվսկիյ լէյբ-գվարդիայի և Վարշավայից եկած Լադօժեան գնդի բատալիոնների վրա հրաձգութիւն էին սկսել մի քանի տներից և Շմիդտի կարասիքի գործարանի ցանկապատներից, որի ժամանակ սպանվել էին երկու ֆէլդֆէբէլ, մի եֆրէյտոր և ծանր վիրաւորվել էր մի ունտէր-օֆիցէր, իսկ մի փոքր յետոյ սպանվել էր օֆիցէր Մարտեանով և նոյն գնդի մի քանի զինուորներ: Զօրքերն սկսեցին խիստ հրացանաձգութիւն. և ապա 7-դ ժամին սկսեցին արագաձիգ գվարդիական արտիլերիայի գործողութիւնները: Զօրքերը շրջապատեցին Պրէսնիան ամեն կողմից, թնդանօթները դրւած էին Վագանկօվեան գերեզմանոցի, Մօսկվա-գետի և Պրօխօրօվեան գործարանի ետևը գտնվող սարից: Արտիլերիական զօրեղ կրակից բռնկվեց և այրվեց Շմիդտի գործարանը, որի մէջ ասում են, կար ռազմամթերքների պահեստը Մամօնտովի լաքի գործարանը, բանուորների ննջարանները, Պրօխօրով մանուֆակտուրայում: Բիրիւկովի բաղնիքներում այրվեց ջրհանը: Երեկոյեան մօտ հրդեհվեցին Պրէսնենսկի մասի շինութեան ետև գտնվող տները: Հրդեհաշէջները նրանց չէին հանգցնում, այլ միայն միջոցներ էին ձեռք առնում կրակից պաշտպանելու հէնց իրան մասի շինութիւնները: Այրվեցին նոյնպէս Ակվարիումի շինութիւնը, Կենդանաբանական այգում, որը դրանից երկու օր առաջ ծակծկված էր ռումբերով, նոյնպէս և կասսայի պավիլիոնը այգու մուտքի մօտ: Առաւօտվանից սկսված ամբակոծութիւնը և հրդեհները սարսափելի իրարանցում առաջ բերին Պրէսնիի խաղաղ բնակիչների մէջ, որոնք սարսափահար դուրս վազեցին տներից և փախչում էին զանազան կողմերը, բայց շատերը նրանցից ընկան գնդակների տարափի տակ. մի քանիսները սպանվեցին արդէն Մօսկվա—գետի առաջի վրա: Ամբողջ շրջանը շրջապատված էր զօրքերով, այնպէս որ պահապանները չէին թոյլ տալիս անցնելու Կուդրինեան հրապարակից այն կողմը և հրաձգութեան էին ենթարկում խումբ-խումբ հաւաքված հետաքրքիրներին, պահանջելով, որ նրանք ցրվեն:

Դեկտեմբերի 16-ին, լրագիրների խօսքով՝ Լէսնոյ փողոցի վրա դրուժիննիկները բռնեցին քաղաքացիական հագուստով գնացող օկոլօդօչնի Եակօվլենսկուն և հրացանազարկ արին փողոցում րէվօլվերներից: Դեկտեմբերի 17-ին կամենում էին նոյն կերպ մահվան պատժի ենթարկել օկոլօտօչնի Կօնօնովին, բայց կինը և երեխաները շրջապատեցին նրան և պահանջում էին, որ իրանց էլ սպանեն նրա հետ միասին: Այդ բանը շարժեց դրուժիննիկների գութը, Կօնօնովի կեանքը խնայվեց:

Դեկտեմբերի 16-ից լոյս 17-ի գիշերը ձերբակալվեց իր բնակարանում, Պլէվակօի տանը, կարասիքի գործարանատէր Վ. Շմիդտ, իբր թէ յեղափոխական կօմիտէտի քարտուղար եղած երդուեալ հաւատարմատար Ալէքսանդրօվ և նոյն կօմիտէտի մի քանի ուրիշ անդամներ: Երէկ, դեկտեմբերի 18-ին, սիստեմատիկական հրաձգութիւն, կարծես, տեղի չէր ունենում, բայց Պրէսնիան շարունակվում էր զօրքերով շրջապատված մնալ, իսկ նրան մօտենալը դժուար էր: Զանազան կէտում կանգնած էին զինուորական խմբեր: Տեղ-տեղ փողոցների վրա հանդիպում էին դիակներ: Պրէսնի վրա մի տեղում հաւաքված էր դիակների մեծ կոյտ, որոնք մի քանի շարք ընկած էին: Դէպի Վաղանկօվեան գերեզմանոցը երևում էին համեստ յուղարկաւորութեան հանդէսներ: Պրէսնիից զանազան ուղղութեամբ ընթանում էին սայլեր կարասիքներով և գնում էին առանձին անհատներ, որոնք կրում էին իրանց պարկերը: Մեր հարցին, թէ ո՞ւր էք գաղթում, յաճախ կարելի էր ստանալ պատասխան. «Հրամայված է դուրս գալ»: Քաղաքի մնացած մասերում կեանքը իր սովորական ընթացքն ընդունեց: Անցնողների խուզարկութիւններ կատարվում են տեղ տեղ, մանաւանդ երեկոյեան 6 ժամից յետոյ: Երեկոյեան 9-դ ժամին, Պրէսնիի վրա նորից երևում էր հրդեհի մեծ արշալոյս:

Սպանվածների և վիրաւորների թիւը վերջին 12 օրերի ընթացքում ճշգրտապէս յայտնի չէ, բայց երևում է, որ սպանվածներ 300-ից, իսկ վիրաւորներ 1000-ից աւելի են լինելու:

նեցին նրան, որովհետև մերժել էր դադարել խնամելուց վիրաւորներին»։

—

«Нов. Вр.»-ն յայտարարում է, որ այժմ իրա համար պարզ է, թէ ինչու հոկտ. 17-ի մանիֆեստում խոստացած քաղաքական ազատութիւնների իրագործումը ուշացաւ։ Այդ նրա համար էր, որ կոմս Վիտտէն հէնց սկզբից և եթ ընդդիմացել էր յիշեալ մանիֆեստի հրատարակութեան, որովհետև նա մանիֆեստի խոստացած ազատութիւնները վտանգաւոր էր համարում այն պատճառով, որ նրանք պիտի քաջալերէին յեղափոխականներին, որոնք միայն ունեն էներգիա և ձեռներէց ոգի։

—

«Моск. Газ.»-ը յայտնում է, որ կոմս Վիտտէն որոշել, վերջացրել է այն ցերեմօնիալը, արարողական կարգը, որով պիտի բացվի Պետական Դուման, ուր Կայսրը հաւատարմութեան երդում պիտի ուտէ Սահմանադրութեան համար։

—

«Matin»-ի սեպհական թղթակիցը դեկտ. 18-ին Մոսկվա այցելած լինելով՝ իր լրագրին ուղղել է մի հետաքրքիր թղթակցութիւն, որից քաղում ենք հետևեալ ուշագրաւ տողերը. Իջնում եմ գնացքից Նիկօլայ կայարանը, որ հանդեսատես է եղել ապստամբների գլխաւոր ջանքերին։ Երկու օր առաջ դեռ ես կռւում էին այստեղում։ Ծովակալ Դուբասովի տրամադրութեան տակ գտնված հաւատարիմ զօրքերը պաշտպանեցին կայարանը յաղթական կերպով։ Եթէ ապստամբները կարողացած լինէին նրան գրաւել, անհնարին կը դարձնէին Պետերբուրգի կողմից զինուորական որ և է օգնութիւն։ Եւ, պէտք է շեշտել, որ շնորհիւ հէնց Պետերբուրգից հասած այդ օգնութեան է, որ յաղթական դուրս եկաւ կառավարութիւնը։ Մինչև օգնութեան հասնելը, այսինքն մինչև դեկտ. 16-ը, ծովակալ Դուբասով նեղը դրութեան մէջ էր. նա ապստամբներին յաղթեց միայն այն ժամանակ, երբ նրան ուղարկեցին կայսերական թեկնապահ զօրքի ընտրեալ մասը։ «Ասացէք, որ ուղարկեն թիկնապահ զօրքը» հեռախօսեց Դուբասով՝ Դուրնօվօյի. և նրան ուղարկեցին, ի միջի այլոց, Սեմեօնով գունդը, փնդապետ Միննի հրամանատարութեան տակ. մի գունդ, որ արդէն ապացուցել է բազմաթիւ առիթներում, որ կարելի է վստահել իր վրա կարգը հաստատելու համար հասարակաց հրապարակներում»։

—

«Молва»-ում տպված է Ցարսկօէ-Սելօի պաշտօնական բարձր շրջանակներին պատկանող մի անձնաւորութեան հետ տեսակցութեան արդիւնքը, ուր այս վերջինը յայտարարում է, որ կոմս Վիտտէի դրութիւնը, ինչպէս շշուկներ էին պտտվում, հեռու խախտված լինելուց, ընդհակառակը աւելի քան երբեք հաստատուն է։

—

Պետերբուրգից «Times»-ին հեռագրում են դեկտ. 21-ից. «Կոմս Վիտտէի հեռացման լուրը հերքվում է հեղինակաւոր աղբիւրից։ Անկասկած արքունիքի կուսակցութիւնը կը նախընտրէր Դուրնօվօյին, բայց դրութիւնը, հակառակ Մոսկվայում տարված «յաղթանակին», մնում է չափազանց կրիտիքական, արդարացնելու համար մի բացարձակ ըէակցիայի փորձը։ Ֆինանսական դրութիւնը, որ կառավարութեան թոյլ կողմն է կազմում, պահանջում է Վիտտէի, այդ «աճպարարի, մոգի, կախարդի» ինչպէս անուանում է «Нов. Вр.»-ն իշխանութեան գլուխ գտնվելը։ Արդարև նրա ամբողջ փորձառութեան կարիք պիտի զգացվի ճարելու համար 6 միլիարդ 250 միլիօն ֆրանկ, որը անհրաժեշտ է 1906 տարվայ համար, մի այնպիսի երկրում, որի կրեդիտը խորտակված է և որի բնակիչների մեծագոյն մասը չեն կարող կամ չեն ուզում վճարել հարկերը, շնորհիւ այն անձուկ դրութեան, ուր գտնվում են առևտուրն ու հողագործութիւնը, և շնորհիւ յեղափոխական պրօպագանդային»։

—

Նախիջևանի գաւառի հաշտարար միջնորդ պ. Սնիգիրեօվը հեռագրել է հետևեալը. «Նեհրամի գիւղական թուրք հասարակութիւնը որոշեց տալ Ջահրիի հաւատակիցներին 4,000 ր.՝ գիւղի պահեստագումարից—առանց վերադարձնելու պայմանի։ Այդ որոշումն արված է Ջահրիի մեծ հրդեհից յետոյ ծագած դժբաղդութեան զոհերին օգնելու համար, իսկ հրդեհը առաջացել էր անցեալ նոյեմբերին թուրքերի և զօրքերի մէջ ծագած ընդհարումից։ Ջահրեցիների կարիքը զարհուրելի է»։

—

„Нов“. լրագիրը հաղորդում է, որ էստօնական գիւղացիների յաճախակի խմբական ապստամբութիւնների պատճառով գերմանական բարօնների դէմ, մտադրութիւն կայ, Բալտիկեան նահանգները միացնել և հիմնել մի գեներալ-նահանգապետութիւն։

—

Ինչպէս յայտնի է, ռուս կառավարութիւնը Եապօնիայի հետ խաղաղութեան դաշնագիրը կապելուց յետոյ, մի քանի անգամ փորձեց նոր փոխառութիւն կնքել։ Թէ ո՞ր աստիճան կառավարութիւնը փողի կարիք ունի այս րօպէիս՝ հեշտ կը լինի ըմբռնել, եթէ ասենք որ բացի մինչև այժմ կատարված փոխառութիւնների տոկոսների վճարումից, ինչպէս և այդ փոխառութիւնների մայր գումարի մի մասի հատուցումից, ամօրտիզացիայից, որը ամեն տարի պետութիւնը պարտաւոր է իրականացնել, ռուս կառավարութիւնը հարկադրված է խոշոր ծախսեր անել մանջուրիական բանակների հայրենիք տեղափոխութեան և Եապօնիայում գտնվող ռուս գերիների պահպանութեան համար միկադօյի կառավարութեան վճարելի տուգանքի համար։ Ահա ինչու համար պ. Կոկօվցեվ՝ ֆինանսների նախկին մինիստրը, դեկտեմբերի 19-ին նորից ափ առաւ Պարիզի դուռը, կնքելու համար ցանկալի փոխառութիւնը։ Թէ ինչ ելք ունեցաւ այդ նոր փորձը, թողնենք որ պատմէ ինքը՝ «Matin»-ը։ «Պ. Կոկօվցեվ Պարիզ հասաւ յունվարի 1-ին (ն. տ.)։ Այս օրերս մի երկար տեսակցութիւն ունեցաւ պ. Ռուվիէի՝ մինիստրների նախագահ, արտաքին գործերի մինիստրի հետ։ Եթէ հաւատանք այն լուրերին, որ պտտվում էին երէկ ֆինանսական այլ և այլ շրջանակներում, պ. Կոկօվցեվը Պարիզ է եկել այն նպատակով, որ մի փոխառութիւն կայացնէ։ Պ. Կոկօվցեվ օժտված է լիազօրութեամբ պ. Վիտտէի կողմից և փոխառութեան գումարը հաշւում են 800 միլիօն ֆրանկ։ Պ. Կոկօվցեվ թախանձագին պնդել էր պ. Ռուվիէի՝ մինիստրների նախագահի առաջ, որ կառավարութիւնը աջակցի այդ փոխառութեան գործում։ Բայց, այնուամենայնիւ, պ. Ռուվիէ, կրեդիտային զանազան հաստատութիւնների և պարիզեան մեծ բանկերի կարծիքն ստանալուց յետոյ, անկարող էր եղել տալ մի նպաստաւոր պատասխան։ Գլխաւոր պատճառը, որ առաջ էին բերել ռուս կառավարութեան առաջարկութիւնները մերժելու համար, քաղաքական այն դրութիւնն է որ տիրում է ներկայումս Ռուսաստանում։ Պ. Կոկօվցեվ՝ թէպէտև, ըստ երևոյթին, միսսիան վերջացրած է, բայց մի քանի օր էլ մնաց Պարիզում, և պէտք է շուտով վերադառնայ Պետերբուրգ։»

—

Յունվարի 2-ին Թիֆլիսի երկաթուղու դէպօյում բանում էին 1,200 բանւոր, բոլորն էլ համարեա բացառապէս ռուսներ։ (Кавк)

—

«Պարարա գազ» լրագիրը հաստատ աղբիւրից իմացել է, որ վրաց օպերետայի ընկերութեան անդամների մի մասը ընդմիշտ միացել է վրաց ֆիլարմօնիական ընկերութեանը, որը խսկոյն միջոցներ է ձեռք առել պատրաստելու և ներկայացնելու հետևեալ օպերաները. Ֆաուստ, Դէմօն, Կարմէն և Ֆիգարօի հարսանիքը։

—

Ինժեներ Կարէլինը մշակեց Մուխրանեան կամուրջ շինելու նախագիծը և ներկայացրեց քաղաքային վարչութեանը. այդ նախագծով, կամուրջը քաղաքային ինքնավարութիւնը կը նստի 200,000 րուբլի։ (Պատարա-գազ.)

—

Յունվարի 1-ին Նախալօվկայի կամուրջով անցնելիս, օֆիցերի հրամանով 3 զինուորները սկսեցին խուզարկել 3 մարդու. այդ զինուորները՝ մէկից խլեցին և տարան 35 ր., երկրորդից՝ 27 ր., իսկ երրորդից՝ 2 ր. 40 կ.։

—

Կիրակի, յունվարի 15-ին Վեցելի թատրօնում ռուս դրամատիկական արտիստների ընկերութիւնը, հեղինակ Մ. Վօստրօի ղեկավարութեամբ կը ներկայացնէ ժամանակակից նոր պիեսա «Осенняя Буря» դրամա 4 գործ.։ Յոյս ունենք, որ հասարակութիւնը այս ներկայացումը անուշադիր չի թողնի։

—

Պետերբուրգից, յունվարի 3-ին (ն. տ.) «Matin»-ի սեփական թղթակիցը հեռագրում է հետևեալը. «Երէկ երեկոյեան Պետերբուրգի ոստիկանապետի մօտ տեղի ունեցաւ պրիստաւների մի արտակարգ ժողով՝ ազգաբնակութիւնը զինաթափ անելու մի ծրագիր մշակելու նպատակով։ Ընդունվեցին հետևեալ կարգադրութիւնները. ոստիկանական բոլոր օֆիցերները, գօրօդօվօյները և նոյն իսկ դռնապանները պէտք է խուզարկեն իրանց հանդիպած կասկածելի երևոյթ ունեցող անձանց. գօրօդօվօյներին և դռնապաններին պէտք է իբրև նուէր տրվի իւրաքանչիւր խլված ըէվօլվէրի համար մի րուբլի և իւրաքանչիւր ֆիննական դանակի համար 50 կոպէկ։ Պրիստաւները իրաւունք պէտք է ունենան խուզարկութիւններ կատարելու իրանց սեփական ինիցիատիվով բնակարաններում, զէնքեր փնտռելու համար։ Ձերբակալութիւնները շարունակվում են։ Պօլիցիան իզուր է որոնում դատաստանական հալածանքի ենթարկված բազմաթիւ խմբագիրների, որոնք պահանջված 10,000 րուբլի երաշխաւորութիւնը չեն վճարել, և ի միջի այլոց, ինժեներ Լօնտիգինին, երգիծաբանական մի լրագրի խմբագրին։ Պրիստաւը օգտվելով նրա անյայտանալուց, հաստատվել է նրա բնակարանում։ Կայսերական թիկնապահ զօրքի Մոսկվայում տարած յաղթանակից յետոյ, առ այժմ գնում ենք ուղղակի դէպի ռէկցիա։ Գործադուլային կուսակցութիւնը կենդանութեան նշաններ ցոյց չէ տալիս. նա թողնում է, որ անց կենայ Ծնընդեան տօները, որոնք Ռուսաստանում մեծ նշանակութիւն ունեն։ Դուրնօվօյի կուսակցութեան յաղթանակը՝ Մոսկվայում, շատ քիչ յոյս է թողնում, որ Վիտտէի կառավարութիւնը՝ արքունիքում պահպանէ բաւականաչափ ազդեցութիւն, ապրելու երկար։ Ույժի դիմելու փորձը աջողութեամբ պսակվեց. այդ ուղղութեամբ գործելու փորձերը երևի չարաչար պիտի գործածեն, և պէտք է սպասել մինիստրական կազմի մէջ արմատական փոփոխութեան։ Կայսրին շրջապատողները խորհուրդ են տալիս նրան դիմելու վայրագ միջոցների, և նախ քան Պետական Դումայի ընտրութիւնը կարելի է նախատեսել շատ ծանր դէպքեր, որոնք անկասկած չափաւոր տարրերի կողմից բողոքի տեղի պիտի տան, այն չափաւոր տարրերի, որոնց ամեն ինչ խոստացած և սակայն ոչինչ տրված չը պիտի լինի»։ «Matin»-ի խմբագրութիւնը աւելացնում է այս հեռագրի տակ. «Այժմ անկասկած է, որ յեղափոխական կուսակցութիւնը ամբողջապէս զգում է Մոսկվայում կրած արիւնոտ պարտութեան ծանրութիւնը։ Կառավարութիւնը յաղթանակում է. բայց, ըստ երևոյթին, այդ յաղթանակից պիտի օգտվի ոչ պ. Վիտտէն, այլ մանաւանդ յետադիմական կուսակցութիւնը, յանձին պ. Դուրնօվօյի, որ դրութեան տէրն է։

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1-ին քաղաքամասի պրիստավը զեկուցանում է պ. ոստիկանապետին, «որ «Рабочій Листокъ»-ի խմբագիր Նիկօլայ Զուրաբօվին ելիսված չէ գտնված. պարզվեց, որ մի շաբաթ առաջ, յայտնի չէ թէ ուր է թագնվել իր բնակարանից (Веринскій Спускъ № 15.). Նրա երաշխաւորն է երդուեալ հաւատարմատար Զ. Եա. Րօսլինը։

—

2) Կիրակի, յունվարի 1-ին երեկոյեան ժամը 9-ին 6-րդ քաղաքամասի գօրօդօվօյ Պեօտր Տիմօշենկօն զեկուցեց նոյն քաղաքամասի պրիստավին, որ նա դիրքից փոխվելով գնում էր տուն Արբուզնի փողոցով. կործանված բերդի կողմից անյայտ մարդու ձեռքով 2 անգամ նրա վրա կրակեցին վնաս չը պատճառելով, որին նա պատասխանեց 1 անգամ արձակելով վինտովկայից։

—

3) Յունվարի 1-ին ցերեկվայ ժամը 12-ին 6-րդ քաղաքամասի գօրօդօվօյներ Ուրմանցեվ, Տիմօչենկօ, Սմրեչցօվնատալօկա և Բերեկաշվիլի ձեռքով բռնված է 3 մեշօկ և 5 արկղ կօնտրաբանդի թէյ մօտ 25 փութ։ Այդ թէյը բռնված է Թերեկօյ շրջանի բնակիչ Դաապօլանց Դուղանդովի և չէչեն Միտիգօվի մօտ, որոնք ձերբակալված են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Լայպցիգ, դեկտեմբերի 7 (ն. տ.)

Ռուսաստանցի ուսանողների դրութիւնը գերմանական համալսարաններում տարէց տարի վատթարանում է։ Գերմանական նացիօնալիզմը և մասամբ էլ անտիսեմիտիզմը նոր ու նոր խստութիւնների [illegible] որպէսզի կարողանան ռուսաստանցիների—որոնց մեծագոյն մասը հրէաներն են կազմում—հոսանքի առաջն առնել։ Ինչպէս արդէն յայտնի է, վերջին մի քանի տարվայ ընթացքում գերմանական համալսարանների դռները շնորհիւ կառավարութեան յարուցած խիստ օրէնքների, փակվեցին ռուսաստանցի կանանց առջև. այժմ վերջիններս միայն ազատ մուտք ունեն Զուիցերիայի Բերն, Լօզան և Ժընև քաղաքների համալսարաններում (և ճիշ գիտէ որքան երկար կը տևէ այս)։ Ռուսաստանի համալսարանների փակումը և հրէաների տոկոսով ընդունելը երիտասարդութեան հոսանքը դէպի գերմանական համալսարանները՝ աւելացրին. և հիմա գերմանական կառավարութիւնները խոչընդոտներ յառաջ բերին սեմինարիստների և ռէալիստների համար, այնպէս որ սրանք մի քանի համալսարաններում այլ ևս չեն ընդունվում (ինչպէս Բերլինում, Լայպցիգում)։ Իսկ Բերլինի համալսարանը գիմնազիստների դէմ յարուցել է մի խայտառակ ու հակաիրաւաբական պահանջ. այն է՝ որ վերջիններս պիտի ներկայացնեն Ռուսաստանում ոստիկանութիւնից ստացած քաղաքական ապահովութեան վկայական։ Մինչև օրս մնում էր ազատ այդ բոլոր խստութիւններից Ենայի փոքրիկ, բայց հռչակաւոր համալսարանը և ահա այնտեղ էլ է սկսվել մեծ յուզմունք ու հալածանք ռուսաստանցիների դէմ և այս անգամ, հետաքրքիրն այն է, որ ոչ թէ կառավարութեան, այլ Գերմանիայի նացիօնալիստ ուսանողների կողմից. վերջիններս մի շարք անհեթեթ զըրպարտութիւններ բարդելով ռուսաստանցիների գլխին՝ համալսարանի վարչութեան ներկայացրին մի շարք պահանջներ, որոնցից գլխաւորներն են՝ ա) ընդունել միայն գիմնազիստներին, բ) նախ քան ընդունելը գերմաներէնից անպատճառ քննութիւն պահանջել. գ) հինգ սեմեստրից յետոյ կիսադօկտորական քննութեան ենթարկել, դ) ուսման վարձը ռուսաստանցիներից աւելի պահանջել. ե) նրանց իրաւունք չը տալ գերմանացիներից առաջ լսարաններում և լաբօրատօրիաներում տեղ բռնել, և այլն։

Բարեբաղդաբար այս անգամ համալսարանի վարչութիւնը անհիմն համարելով ռուսաստանցիների դէմ յարուցած մեղադրանքները՝ չընդունեց գերմանացիների պահանջները, բացի վերջին կէտից. իսկ 4-րդ կէտը թողել է կառավարութեան որոշման։

Այս բոլոր խստութիւնները, մի կողմ թողած այն բարոյական ճնշումն, որ ռուսաստանցի ամեն մի ուսանող զգում է իր վրա, թէ շատ պրոֆէսօրների և թէ իր գերմանացի ընկերների կողմից, անշուշտ կը փակեն ռուսաստանցիների մեծագոյն մասի համար գերմանական համալսարանների դռները։

Այս երևոյթը կորստաբեր կը լինի նաև մեր հայ հասարակութեան, համար որովհետև մինչև օրս Գերմանիայի հայ ուսանողութեան ստուար մասը կազմում են թեմականաւարտները, իսկ թէ ինչ մեծ ծառայութիւն են մատուցել այս վերջինները մեր հասարակութեանը, դա քաջ յայտնի է։

Ուրեմն մեր հասարակութիւնը լուրջ պիտի մտածի միջնակարգ կրթութեան մասին, պիտի ընդարձակէ թեմական դպրոցների ծրագիրը մինչև գիմնազիական ծրագիրը, որպէս զի մեր մատաղ սերնդի համար փակված չը մնան թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի համալսարանների դռները։

Կաշխատեմ յաջորդ նամակներով տեղական համալսարանների և նրանց ընդունելութեան կանոնների հետ ծանօթացնել հետաքրքրվողներին։

Յ. Տէր-Մովսէսեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաստան եւ Անգլիա։—Ծովային մինիստրութեան թոյլտուութեամբ, ադմիրալ Րօժդեստվենսկին դեկտ. 19-ին «Нов. Вр.»-ին ուղղել էր մի ուշագրաւ նամակ Ցուշիմայի նաւային կռւի մասին։ Ադմիրալը այդ նամակում գրում էր տալիս որ ծովակալ Տօգօն բացարձակապէս գաղտնի էր պահել իր ույժերի կազմն ու քանակը, մինչև ռուսական էսկադրայի եապօնական ջրերը մտնելը։ Այդ նամակում աւելացրված է. «Եապօնական էսկադրայի կազմն ու կարգաւորումը գաղտնի էին մնում մինչև անգամ անգլիական դաշնակից էսկադրայի ադմիրալից, որը կենտրոնացրեց իր ույժերը Վէյ-Հայ-Վէյում, ուր սպասում էր անգլիացի ծովակալը, որպէս զի հրաման ստանայ ոչնչացնելու ռուսական էսկադրան, եթէ այդ ոչնչացման գործը (իսկական նպատակը, որին ձգտում էր Մեծ-Բրիտանիան) եապօնական ույժերից բարձր լինէր։ Անգլիական լրագիրները՝ հետևեալ օրն իսկ Պետերբուրգից հրատարակեցին մի հեռագիր, որի համեմատ անգլիական դեսպանը՝ Պետերբուրգում, բացատրութիւն է պահանջել կոմս Լամզդօրֆից Րօժդեստվենսկու «Нов. Вр.»-ում արած յայտարարութեան մասին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվարի։ Օրէցօր աւելանում է զգալի կերպով Պետական Դումայում ընտրվողների ցուցակում գրվողների թիւը։ Նոյն իսկ Նոր Տարուց առաջ քաղաքային տան մէջ հաւաքվեց մի ամբոխ, որը դուրս կոչեց քաղաքագլխի օգնականին, և պահանջեց մտցնել իրանց անունները ցուցակում։ Գերակշռում են պրոմիլային հարկի վճարողները։ «Нородное Хозяиство» լրագիրը հաղորդում է, որ Սօլսկու մասնաւոր խորհրդակցութեան մէջ նախագահը յայտնեց Կովկասի ներկայացուցիչներին, որ Կովկասեան պատգամաւորների Պետական Դումայում մասնակցելու հարցը վճռված է ժողովում միաձայն, և ձեռնարկված է լրացուցիչ իրաւունքների մշակման Կովկասի ընտրութիւնների մասին։

ՏՕՄՍԿ. 3-ին յունվ։ Տեղային զօրքերի հրամանատարի որոշումով «Вѣстникъ Сибири» լրագիրը դադարացրած է հէնց առաջին համարի լոյս տեսնելուց յետոյ։

ԻՐԿՈՒՏՍԿ. 3 յունվ։ Հրատարակված են կանօններ, որով արգելվում են ժողովներ և համախմբումներ կազմել փողոցներում և մասնաւոր տներում, զէնք պահելու կամ ունենալու։ Հաստատված է ազգաբնակութեան ինքնապաշտպանութեան ցուցակագրութիւն։ Կազմակերպութիւնները յայտարարված են ոչնչացրած։

ՊԼՕՑԿ, 2 յունվարի։ Կազմվել են նախընտրական ագիտացիայի համար երկու ընկերակցութիւններ՝ լեհական և հրէական։ Վերջինս քիչ շանսեր ունի ունենալու իր թեկնածուն Դումայում։

ԱԼԺԷԶԻՐԱՍ, 2 յունվարի։ (Ֆարրա) Վաղը կայանալու է Մարօկկեան կօնֆերենցիայի առաջին ժողովը, որի մէջ մշակելու է աշխատանքների կարգը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 յունվարի։ Այսօր, գիշերս ձերբակալված են բանւորների պատգամաւորների խորհուրդը ամբողջ կազմով—թւով 22 մարդ։ Գրաված են բոլոր ձեռագրերը և արձանագրութիւնները։

ՏՈՒԼԱ։ 3 յունվարի։ Քաղաքագլուխ ընտրված է Լիւբօմուդրօվ, որ գլուխ է կանգնած «Կայսեր և կարգի համար» կուսակցութեան։

ԻՐԿՈՒՏՍԿ, 3 յունվարի։ Վերականգնած երկաթուղային գնացքը դեռ չէ մտել սովորական կարգի մէջ։ Արագ գնացքները չեն գնում։ Օրական զինուորական գնացքներ գնում են 3 հատ։

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ, 3 յունվարի։ Քաղաքում կպցրած է յայտարարութիւն կազակների պլաստունեան բատալիօնի գալու մասին։ Սպասվում է զինուորական դրութեան հրատարակում։

ՄՈՍԿՎԱ, 3 յունվարի։ Ժամհարեանների բանկային տունը Կովկասից-Շուշուց ստացել է հետևեալ հեռագիրը. «Ծանր րօպէներում, երբ քաղաքը պաշարված է, շուրջը հրացանաձգութիւն է, ժողովուրդը քաղցած, Եւլախ կայարանից մթերքներ չստանալու պատճառով, որ գտնվում է հարիւր վերստով հեռու Շուշուց, երբ ամեն կողմ թագաւորում է մահը և ոչ ոք յոյս չունի վաղվան, դիմում ենք մեր երկրացիներին հասցրէք մեր հառաջանքները կառավարութեան ականջը, թեթևացրէք մեր տանջանքները։» «Ընտրեալների ժողովի նախագահ Շախնազարեան։

ԿԻԵՎ, 3 յունվարի։ Սէննակի շուկայում, մի անյայտ մարդ հագած գիմնազիստի շորեր, գնելով դրամաճառանոցում մի քանի տետրակներ այն ժամանակ, երբ խանութում մնաց միայն տէրը, դաշյունով մի քանի հարւածներ հասցրեց նրան, կողոպտեց կասսայից 500 ր։ Վէրքերը գտնված են վտանգաւոր։ Լոյս տեսաւ սահմանադրական-ռամկավարական կուսակցութեան օրգանի «Свобода и Право» լրագրի առաջին համարը։

ՊԷՆԶԱ, 3 յունվ.։ Պուշ կարսկի փողոցում ատրճանակի երեք հարւածով սպանված է 78 հետևակ դիվիզիայի գլխաւոր գեներալ Լիսովսկին։ Մարդասպանը դեռ չէ գտնված։

ՄԻՆՍԿ, 3 յունվարի։ Երկաթուղային ծառայողների միութեան մէջ մասնակցելու մերժման պատճառով, տեղական կօմիտէտը քայքայվեց։

ԲԷԼԳՐԱԴ, 3 յունվարի։ Սերբա-կառավարութեան՝ Աւստրօ-Վենգարիան արած յայտարարութիւնը—թէ չէ ցանկանում մաքսային դաշնագրից հրաժարվել Բօլգարիայի հետ և պատրաստականութիւնը մտցնելու պայմանագրի մէջ հարկաւոր փոփոխութիւններ,—հարկադրում են վախենալ որ մաքսային կռիւ կը ծագի Աւստրօ-Վենգրիայի հետ։

ՌՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ, Յունվարի 2-ին։ Ապտեկմանի խանութում երևացել է փամփուշտների գործարան, ձերբակալված է 4 հատ պատրաստի ռումբ։ Տէրը բանտակված է։

ՎԱՐՇԱՎԱ, յունվարի 3-ին։ Քաղաքում կպցրած են ընտրութեան մասին յայտարարութիւններ։ Նախընտրողական շարժումը աշխուժանում է։ Հրէաները միանում են ընտրութիւններին։ Բանւորները, չը նայելով ագիտատօրներին՝ ներկայանում են ընտրողական բիւրօին։

ՏՈՒԱՊՍԷ, դեկտեմբերի 30-ին։ Տուապսէի շրջանում բազմաթիւ ագիտատօրներ խորհուրդ են տալիս հարկ չը տալ, կալուածատէրերից հողերը խլել, պահանջել սահմանադիր ժողով։ Բնակիչները մնում են կառավարութեան կողմը։ Նախկին, սև ծովի ափերը նուաճող, կօզակները, գրգռված են ագիտատօրների դէմ, սպառնում են նրանց հետ Տուապսէում բռնի ույժով վարվել։ Միտինգները դադարեցին։ Սօչիի հետ յարաբերութիւնը կտրված է։

ՊՕՐՏ—ՍԱԻԴ, յունվարի 2-ին (Րէյտեր) Օդեսսա գնաց գերմանացոց շոգենաւ «Գերդը» 2160 ռուս գերիներով։

ԲԷԼԳՐԱԴ, դեկտեմբերի 31-ին։ Ուսանողների մէջ Սերբիայի հանրապետութիւն յայտարարվելու օգտին նկատվում է շարժում։ Ոստիկանութիւնը համալսարանի ադմինիստրացիան որոնում են այն անձնաւորութիւններին, որոնք 2-րդ անգամ այդ տեսակ կոչ են կըպցրել համալսարանի շինութեան մէջ։

ԼՕՆԴՕՆ, դեկտեմբերի 31-ին (Րէյտեր)։ Ընտրված են 78 ազատամիտներ, այդ թւում 13 բանւորական կուսակցութիւնից, 24 ունիօնիստներ։ Ազատամիտները տարել են 42 տեղ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունվարի Պաշտօնական։ Շատ լրագրներում հաղորդագրութիւններ երևացին, որոնք ասում են թէ մինիստրների խորհրդի նախագահը յայտնել է, որ հոկտ. 17-ի մանիֆէստը Ռուսաստանի պետական կեանքի մէջ էական փոփոխութիւններ չէ մըտցրել և որ այդ մանիֆէստով խոստացված և Դումային ապահովեցրած իրաւունքները կարող են և չիրականանալ լիապէս և որ ինքնակալ իշխանութիւնը մինչև մանիֆէստը եղած ձևով կը շարունակվի նաև պետական Դումայի հրաւիրվելուց յետոյ, առանց որ և է փոփոխութեան։ Այդպիսի լուրերն այնքան ակներև սուտ են, որ նոյն իսկ կարիք չունեն հերքումի, եթէ որ շատ տարածված չը լինէին նրանք և շատերը չը հաւատային։ Այդպիսի տեսակէտ կոմս Վիտտէն յայտնած չէր կարող լինել հէնց այն պատճառով, որ դրանով նա կասկած յայտնած կը լինէր թագաւոր Կայսրի յայտնած պարզ ցանկութեան մասին։ Այդպիսի կասկածն առհասարակ անթոյլատրելի է ամեն մի հաւատարիմ հպատակի կողմից և ակներև է, որ չէր կարող յայտնված լինել մինիստր-նախագահի կողմից։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նոր Գեղունին
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Նախորդներէն աւելի ճոխ պարունակութեամբ լոյս տեսած է Նոր «Գեղունին». կը պարունակէ 100-էն աւելի գեղատիպ դասական պատկերներ, գերազանցօրէն յաջող է տպագրութիւնը, հիանալի են բազմագոյն պատկերները։ Պատկերազարդ թերթէ մը թէև չի պահանջուիր գրական գնահատելի պարունակութիւն մը, սակայն խմբագրութիւնը «Գեղունիի» այս բաժնին հարկ եղած ջանքը խնայած չէ. ներքին և արտաքին յօդուածագիրներ ունին հետաքրքրական գրուածներ։

Գինն է 10 ֆրանկ, 4 րուբլի, 2 տոլար։

Դիմել Imprimerie Arménienne St. Lazare Venise (Italie) 1—3

Բ Ժ Ի Շ Կ
Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2, (ա. օ.) 68—300

Արմեանսկի ուսումնարանի համար ուսուցիչ արդէն հրաւիրված է։ 2—2

Երուանդ Պ. Քէօսէեան, հիմա 27 տարեկան, բնիկ Արաբկերցի, նախկին շրջանաւարտ ս. Էջմիածնի Գէորգեան Ճեմարանի, չորս տարի է արդէն իր մասին բնաւ լուր մը հաղորդած չըլլալով, կը խնդրվի որ իր նկատմամբ ուրկէ տեղեկութիւն ունեցողները հաճեն հաղորդել գայն թերթի խմբագրութեան կամ —Կ. Յ. Գարակիւլեան, 141 milk st. Boston mass, U. S. A. 2—4

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՅԱՌԱՋ“
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԵՒ ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ,

Խմբագրութեան անդամներն են. Ահարոնեան Աւետիս, Դաւթեան Յոհան, Թոփչեան Եղիշէ, Խաժակ Գ., Նազարեան Լիպարիտ, բժ. Օհանջանեան Համ., Իւսուֆեան Յովհաննէս։

Մօտիկ աշխատակիցներն են. Բժ. Աթաբէգեան Լևոն, Ա—Դօ, Զարդարեան Ռուբէն, Զօրեան Ստեփան, Զաւարեան Սիմէօն, Թումանեան Յովհաննէս, Իսահակեան Աւետիք, Լէօ, Լիսիցեան Ստեփան, Մալումեան Խաչատուր, Յովհաննիսեան Միքայէլ, Յովհաննիսեան Տիգրան, Շիրեան Սիմէօն, Պապօվեան Ալէք., Սամուէլեան Խաչ., Տիգրանեան Սիրական, բժ. Օհանեան Քրիստ. և ուրիշները։

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Թիֆլիսում՝ տարեկան 6 ր., ամսական 50 կոպ.։ Թիֆլիսից դուրս՝ տարեկան 7 ր., ամսական 60 կոպ.։ Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.։

Դիմել՝ Тифлисъ, редакція «Арачъ» կամ Tiflis (Russie) Rédaction «Haradj».

Խմբագրատունը գտնվում է Թիֆլիսում, Սերգիեվսկայեա փողոց № 9։

Խմբագիր—Ա. Սահակեան
Հրատարակիչ—Մ. Նալբանդեան

„Գուտտենբերգ“ գրախանութում վաճառվում են

«Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի», Մ. Եկմալեանի	10 ռ.—
«Ներդաշնակեալ Երգեցողութիւնք Ս. Պատ.» արական բարձր ձայն (Tenore)	9 »—
» » » արական բարձր ձայն (Basso)	3 »—
» » » իգական խոնարհ ձայն (Alto)	2 »—
» » » իգական բարձր ձայն (Soprano)	2 »—
«Թուաբանական խնդիրներ» Երզնկեանի ա. և բ. մասերը միասին	—30 կ.
» » » գ. մաս	—35 »
«Շիրակ» օրացոյց Աբինեանի պատի	—60 »
» » » ծոցի	—20 »
Սիմէօնեան «Դասագիրք աշխարհագրութեան» ա. տարի նախագիտելիք	—35 »
» » » գ. տարի մասն քաղաքական	—60 »
» «Դասագիրք թուաբանութեան»	—65 »
«Բնագիտութիւն» (կենդանաբ. հանքաբան. և բուսաբան.) Զ. Գրիգորեանի	—60 »
«Բնախօսութիւն», Վօսթէրի, թարգմ. Գ. քահ. Երզնկեանի	—30 »
» թարգմ. Արշակ Ագապեանի	—20 »
«Տրամաբանութիւն» Ի. Յարութիւնեանի	1 ——
«Բանահիւսութիւն տնտեսութեան» Ճաղարբէգեանի	—60 »
«Դասաւանդման խորհուրդներ» Գ. քահ. Երզնկեանի	—30 »
«Ընդհանուր աշխարհագրութիւն» ուսումն. և բնական աշխ. Գ. ք. Տէր-Գաբրիէլեանի	—30 »
«Դասագիրք կրօնի», ա. տարի, Ս. քահ. Տէր-Յովհաննիսեանի	—20 »

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“, Д. Галустяну. 176 1—2

(GRAND-PRIX)
ՌՈՒՍ-ԱՄԵՐԻԿԵԱՆ
С.-ПЕТЕР-
БУРГЪ
76—80

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т-ва Гермесъ, Мад. ул. № 15.